2025, ՕԳՈՍՏՈՍ Ա, ԹԻՎ 15 (683)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Վեհափա՛ռ Տեր,

Ի խորոց սրտի շնորհավորում ենք Ձերդ Սրբության ծննդյան տոնը...

Աշխարհաքաղաքական սպառնալիքների ու մութ գործընթացների այս ժամանակներում, երբ մեր հայրենիքը շարունակում է տոկալ գոյութենական ծանրագույն իրավիճակում, Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ աստվածսիրության և հայրենաշինության իր ուխտյալ և անձանձիր առաքելությամբ, նույնպես հաղթահարում է փշե ճանապարհ:

Աստվածշնորհ իմաստնություն, հերոսական կամք ու արիություն են պետք՝ դիմագրավելու և դիմադարձելու բոլորագրոհ փորձություններին, անկումների խորխորատներից հայրենիքի փրկության վերելքն առաջնորդելու և ազգի գոյությունն անխորտակ պահելու:

Ձեր հովվապետական գահակալությունը զուգադիպեց մեր ժողովրդի պատմության շրջադարձային պահերի՝ քաղաքական ու ողբերգական մեծ բեկումներով, և անսխալական լինելու բացարձակ պատասխանատվության բեռը կրեցիք որպես Հայրապետ ու հոգևոր առաջնորդ՝ ջանք չխնայելով պատնեշելու կործանարար հորձանուտների ընթացքը և բոլոր պարագաներում հորիզոնում ունենալով անկախ, հոգևոր, զորեղ Հայաստանի վառ տեսիլը՝ պատմական սահմաններով ու քրիստոնյա հոգեկերտվածքով...

Ձերդ Վեհափառության ողջախոհությունը, անհոգնաբեկ եռանդն ու անձնադիր նվիրումը տարիներ շարունակ ի սպաս եք դրել մեր փլատակված և կիսավեր աղոթատեղիներն ու տաճարները վերակերտելու ու բարեզարդելու տիրաշնորհ գործին և նույն ոգով ու մտքով այժմ պայքարում եք՝ պաշտպանելու զանահարվող ՀԱՅ ՈԳՈՒ ամրոցը, կանխելու-կասեցնելու մեր հայրենիքի ու ժողովրդի նորագույն խաչելությունը և մահը:

Փույթ չէ, թե այդ ճանապարհին արժանանում եք հալածանքների ու փշե պսակի. դա իսկատիպ առաջնորդի ճակատագիր է. նրանն են և՛ փառքի դափնիները, և՛ փշե պսակը, ընտրյալ առաջնորդն իր ուսերին կրում է և՛ ոսկե ծիրանին, և՛ չարչարանաց խաչը...

Պատմության ու ժամանակի քննության առջև վաղ թե ուշ կանգնում են ազգն առաջնորդելու բարձրագույն իրավունք ստացած բոլոր անհատները, և յուրաքանչյուրը՝ ըստ յուր գործի: Գործն է անմահը, և բարի գործն է այդ անմահությունն օրհնություն ու պարգև դարձնողը: Ձերդ Վեհափառության ժառանգությունը հարյուրավոր շեն ու ողողանջող եկեղեցիներն են՝ պայծառակերպված Մայր Տաճարի թագապսակով: Ձերը վասն Աստծո և հայրենիքի անխոնջ գործունեությունն է, այն շնորհազարդ իմաստնությունը, որով Ձեր գահակալությունը նշանավորել եք հարարժեք գործերով՝ քարեղեն տաճարներից մինչև ոգեղեն դպրանոցներ, քրիստոնյա բարեգործություններից մինչև հայրենատեր ու հայրենապահպան գործեր, հոգևոր ներուժի զորացումից մինչև եկեղեցական համակարգի կայուն զարգացում:

Վեհափա՛ռ Տեր,

Թող Ձեր վեհաշուք ներկայությունն այսուհետև ևս փառազարդի Հայոց Եկեղեցու խորանները, թող Սուրբ

Հոգու շնորհազարդ ներկայությունը միշտ ուղեկից լինի Ձեզ հայրապետական մեծ ճանապարհին: Ձերդ Վեհափառությանը արևշատություն, քաջառողջություն և աստվածային զորակցություն Ձեր գահակալությունը Եկեղեցուն և հայրենիքին ամբողջանվեր սպասավորեցնելու աստվածահաճո գործում: Մեր վերջին ու մեծագույն մաղթանքն է, որ Ձերդ Սրբությունը շուտով վայելի իր փափագած անկախ, հզոր ու անվտանգ հայրենիքի և նրա գրկում ծաղկող Հայ Եկեղեցու երանությունը, մեր ժողովրդի քրիստոնյա վերազարթոնքի սրտաջերմ բերկրանքը...

Որդիական սիրով և խոնարհումով՝ «Քրիստոնյա Հայաստանի» խմբագրություն

Լուրեր

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց արևելյան թեմի ուխտավորներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն օգոստոսի 4-ին ընդունեց ԱՄՆ հայոց արևելյան թեմի Բոսթոնի շրջանի Հայփոյնթ համայնքի ուխտավորներին՝ առաջնորդությամբ հոգևոր հովիվ Արժանապատիվ Տ. Վարդ քահանա Գյոզալյանի:

Իր օրհնությունը բաշխելով ուխտավորներին՝ Հայոց Հայրապետը կարևոր նկատեց աշխարհասփյուռ հայորդիների կապը հայրենիքի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ, ինչն առ հայրենին և հոգևոր-ազգային արժեքները հավատարմության լավագույն դրսևորումն է: Այս գործում Նորին Սրբությունը կարևորեց նաև սփյուռքում իրենց ծառայությունը մատուցող հոգևոր սպասավորների դերը:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հայաստանի առջև ծառացած մարտահրավերներին՝ վստահություն հայտնելով, որ հայ ժողովուրդն իր միասնականության և զորեղ հավատքի շնորհիվ կկարողանա հաղթահարել առկա դժվարություններն ու փորձությունները: Վերջում Հայոց Հովվապետը պատգամեց ուխտավոր հայորդիներին հավատարիմ մնալ ազգային ինքնությանը, ամրապնդել իրենց սրտերում սերն ու նվիրումը հայրենիքի և Հայոց եկեղեցու նկատմամբ:

ՀԲԸՄ-ի «Բացահայտիր Հայաստանը» ծրագրի մասնակիցներն այցելեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածին

Օգոստոսի 2-ին Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) «Բացահայտիր Հայաստանը» ծրագրին մասնակից սփյուռքահայ երիտասարդների: Սրբազան Հայրը, հայորդիներին փոխանցելով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները, կարևորեց վերջիններիս այցը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ինչը լավագույն հնարավորություն է՝ ճանաչելու և բացահայտելու հայրենիքը: Մուշեղ եպիսկոպոսը հորդորեց հայորդիներին լինել ՀԲԸՄ-ի բարի ավանդույթների շարունակողը, զորացնել իրենց հավատքը, սերն առ հայրենին ու մայր եկեղեցին, Հայաստանից ստացած տպավորությունները փոխանցել իրենց հասակակիցներին ու ընկերներին, որպեսզի նրանք ևս այցելեն հայրենիք՝ ծանոթանալու իրենց ազգային ու հոգևոր արժեքներին: Վերջում Սրբազան Հայրը պատասխանեց նաև երիտասարդներին հետաքրքրող հարցերին:

Օգոստոսի 8-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական մեկշաբաթյա այցով մեկնել է ԱՄՆ հայոց արևելյան թեմ:

Նորին Սրբությունը հանդիպումներ կունենա թեմական առաջնորդի, հոգևորականաց և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարների հետ՝ քննարկելու Մայր Աթոռի կողմից իրականացվող ծրագրերը:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Գարեգին Երկրորդ Վեհափառը Մայր Տաճարի շինարարական աշխատանքներին ծանոթանալիս

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերանորոգված Մայր Տաճարն օծելիս

Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եկեղեցաշեն գործունեությունը

Շուրջ 1700-ամյա Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու 132 գահակալների շաքում իր եկեղեցաշինական գործունեությամբ առանձնահատուկ տեղ է գրավում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ընդհանրապես Նորին Սրբության գահակալության տարիները (1999 թվականից ցայսօր) նշանավորվել են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բարգավաճմամբ և բազմակողմանի ու ներդաշնակ զարգացմամբ՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում: Սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռի արժանավոր գահակալի գործունեության մեջ առանցքային նշանակություն ունի եկեղեցաշինությունը, որի նպատակն է վերականգնել և ամրապնդել հայ ժողովրդի հոգևոր կյանքը, պահպանել ազգային ինքնությունն ու մշակույթը, ստեղծել նոր ու գործուն հոգևոր կենտրոններ:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդի եկեղեցաշինական գործունեությունն ընթացել և շարունակվում է երեք հիմնական ուղղություններով.

1. *Նոր եկեղեցիների կառուցում:* Նորին Սրբության գահակալության օրոք կառուցվել են բազմաթիվ նոր եկեղեցիներ՝ արձագանքելով թե՛ Հայաստանի բնակչության աճող հոգևոր կարիքներին, թե՛ սփյուռքի հայ համայնքների ձգտումներին՝ ունենալու իրենց համախմբող սեփական հոգևոր կենտրոնները: Այս նոր եկեղեցիները կառուցվել են ինչպես Հայաստանի մեծ ու բազմամարդ բնակավայրերում, այնպես էլ սահմանամերձ և հեռավոր գյուղերում, ինչը վկայում է Հայոց Եկեղեցու սրտացավության, ազգաշահ ու պետականամետ գործելաոճի, իրավիճակը ճիշտ գնահատելու և դրան համապատասխան հիմնավորված միջոցառումների ձեռնարկման մասին: Նոր եկեղեցիները և հոգևոր կենտրոնները նպաստում են հայ ժողովրդի հավատքի վերածննդին և ամրապնդմանը, ինչպես նաև եկեղեցական-ծխական համայնքների կազմավորմանն ու զարգացմանը, հոգևոր կյանքի աշխուժացմանը:

2. *Հայ բազմադարյան մշակույթի խոսուն վկաների՝ վանական համալիրների ու եկեղեցիների հիմնանորոգում, վերակառուցում կամ վերանորոգում:* Կարևորագույն ուղղություն է եղել Հայաստանում և հայկական գաղթավայրերում պահպանված հայ եկեղեցական ճարտարապետության բազմաթիվ հուշարձանների պահպանումն ու վերականգնումը: Այս գործընթացը նաև նպատակ ունի պահպանելու հայկական պատմա-մշակութային և ճարտարապետական ինքնատիպ ժառանգությունը, ինչպես նաև այդ եկեղեցիներին վերադարձնելու իրենց հոգևոր դերն ու նշանակությունը: Շատ դեպքերում վերակառուցման աշխատանքները ֆինանսավորվել են բարերարների կողմից, որոնք համախմբված են եղել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Վեհափառ Հայրապետի շուրջ: Բազմադարյա վանական համալիրների ու եկեղեցիների վերակառուցումը նաև նպաստում է հայկական պատմա-մշակութային ժառանգության պահպանմանը, զարգացմանն ու հանրահռչակմանը, ինչը շատ կարևոր է հատկապես ազգային ինքնագիտակցության բարձրացման և ազգային ինքնության պահպանման տեսանկյունից:

3. *Եկեղեցական համալիրների և հոգևոր-մշակութային հաստատությունների ստեղծում:* Նորին Սրբության եկեղեցաշինական գործունեությունը սահմանափակված չի եղել միայն նոր եկեղեցիների կառուցմամբ: Կառուցվել և բարեկարգվել են նաև եկեղեցական համալիրներ, հոգևոր-մշակութային ու կրթական կենտրոններ՝ հայորդյաց տներ, կիրակնօրյա դպրոցներ, ակումբներ, թանգարաններ, որոնք ծառայում են ամբողջ հայ ժողովրդի և Հայ Առաքելական Եկեղեցու բարեպաշտ զավակների կրթական, հոգևոր-ազգային ու մշակութային կարիքները բավարարելուն: Սփյուռքում և Հայաստանի Հանրապետությունում կառուցված նոր եկեղեցիներն ու հոգևոր-մշակութային հաստատություններն աստիճանաբար վերածվում են համայնքային կենտրոնների, որտեղ կազմակերպվում և զարգանում է ոչ միայն ազգային-հոգևոր, այլև մշակութային, կրթական ու հասարակական-ներհամայնքային կյանքը:

Հայաստանում հոգևոր կյանքը վերազարթոնք ապրեց, և եկեղեցաշինությունը մեծ ծավալներ ընդունեց 1991 թ. անկախության հռչակումից հետո: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գահակալների անմիջական մասնակցությամբ ու առաջնորդությամբ՝ նորանկախ Հայաստանի Հանրապետությունում հայկական եկեղեցական ճարտարապետությունը վերածնունդ, ապա նաև վերելքի նոր շրջան ապրեց: Ժամանակակից հայ ճարտարապետներն ու վարպետ-շինարարները, կիրառելով նոր տեխնոլոգիաներ, լուծումներ ու մտահղացումներ, նորակառույց եկեղեցիները բացառապես նախագծում և կառուցում են՝ պահպանելով ու զարգացնելով հայկական միջնադարյան եկեղեցական ճարտարապետության լավագույն ավանդները:

Գարեգին Երկրորդ Վեհափառ Հայրապետը դեռևս Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդության ժամանակաշրջանում, բայց հատկապես կաթողիկոսական գահակալության առաջին իսկ տարիներից իր գործունեության կիզակետում է պահել նոր եկեղեցիների կառուցումն ու հոգևոր կառույցների վերաշինումն ու հիմնանորոգումը: Դրա խոսուն վկաներն են այն բազմաթիվ սրբավայրերը, որոնք կառուցվել, վերակառուցվել, հիմնանորոգվել ու բարեկարգվել են Նորին Սրբության գահակալության տարիներին: Վեհափառ Հայրապետի օրոք կառուցվել ու վերանորոգվել են *300-ից ավելի* եկեղեցիներ և կրթական-մշակութային հաստատություններ հայաստանյան ու արտասահմանյան թեմերում: Բավական է նշել, որ միայն 1999–2011 թթ. վերանորոգվել են շուրջ 200 վանական համալիրներ ու եկեղեցական կառույցներ Հայաստանում և սփյուռքում:

Գարեգին Երկրորդ Հայրապետն իրավամբ վաստակել է *«Եկեղեցաշեն»* պատվանունը կրելու իրավունքը:

Վեհափառի գահակալության տարիներին կառուցված եկեղեցիներից նշանավոր են.

1. Արարատյան Հայրապետական թեմ. Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Ս. Աննա եկեղեցի, Ավանի Ս. Աստվածածին եկեղեցի, Նոր Արաբկիր թաղամասի Ս. Խաչ եկեղեցի, Դավթաշեն թաղամասի Սրբոց Նահատակաց եկեղեցի, Եռաբլուր պանթեոնի Սրբոց Վարդանանց Նահատակաց եկեղեցի, Զորավար Անդրանիկի թաղամասի (նախկինում՝ Հարավարևմտյան թաղամաս) Ս. Երրորդություն եկեղեցի, Ներքին Չարբախի Ս. Խաչ եկեղեցի, Նոր Նորքի Ս. Սարգիս եկեղեցի, Նոր Նորքի Ս. Աստվածածին եկեղեցի, Նորքի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցի, Նուբարաշենի Սրբոց Նահատակաց եկեղեցի:

➥ էջ 12

Երբ քարերը խոսուն տաճարներ են դառնում...

Սուրբ Էջմիածինը, հայի ոգեղեն տաճարի ու քարակերտ վանք ու կոթողների բյուրեղակերտը լինելուց զատ, աստվածավանդ մեր հայրենի հողի կանչն է, հայի հոգու նշանակն ու սրբավայրը, որտեղ հազարամյակների հույսն ու սերը միահյուսվում են անփոփոխ էությամբ, ավանդույթներով ու հավատի խոր արտահայտություններով: Հավատքն այստեղ ծավալվում ու սավառնում է ոչ միայն իբրև աղոթք, այլև բյուրեղացած շունչ, որ փշաքաղում է անգամ բարձրաբերձ լեռների կատարները, կաթիլ-կաթիլ ողողում ու նորոգում երկիրը՝ խորարմատ ամփոփվելով մարդու սրտի մեջ, ինչպես խաղողի վազը՝ հողում:

Ավանդույթներն ու հոգեպարար արարողակարգերն այստեղ սոսկ հիշողություններ ու հիշատակներ չեն, այլև կենդանի ու խորախորհուրդ իրողություններ, որ կերոնների տեսքով այրվում են կույր ու համր, դառն ու սառը ժամանակների մեջ և լույս սփռում: Այսպես հայոց հոգին հարախորհուրդ հեղվում ու ցողվում է զորությամբ ու անբաժանելի միասնականությամբ:

Սուրբ Էջմիածնի պատմությունը դարեր շարունակ արտացոլվել է ինչպես գունեղ ու բոցավառ ժայռ ու քարերի մեջ, այնպես էլ տառապած ու խնկարկված սերունդների աչքերում, որոնք իրենց հաղթանակներով ու կորուստներով, հավատի պայծառ գործերով կապել են անցյալն ապագային՝ պահպանելով ու առատացնելով մարդկային հոգու անչափելի ջերմությունը:

Սուրբ Էջմիածինը հավիտենական մի օջախ է, որտեղ հայ ժողովուրդն իր աստվածային նկարագիրն է վերապրում՝ քարը դարձնելով աղոթք, իսկ աղոթքը՝ հավերժություն... Հողն ու քարը, ավանդույթն ու պատմությունը նրա սրտում դառնում են միահյուսված մի մարմին, և Հայոց Հայրապետի օրհնությունն այդ մարմնի ոսկեգույն հյուսվածքն է՝ մարդուն և աստվածային լույսն իրար շաղկապող:

Հայրապետի՝ երկինք պարզված ձեռքը հրաշակերտ մի խոստովանություն է Արարչին ու ժողովրդին, համաժամանակ՝ առաջնորդ ու խնամակալ լինելու ուղեցույց և հույսի նշան: Այն ոչ միայն օրհնության նշանակ է, այլև անցյալը, ներկան ու ապագան իրար կապակցող հոգևոր ժառանգության անքակտելի շղթա, որն ամեն անգամ նոր ուժ ու եռանդ է հաղորդում հավատացյալին՝ լուսավորելով նրա հոգու ամեն մի անկյուն...

Լեռների ամայության մեջ, որտեղ լռությունն անգամ քար է կտրում, մեծ ու փոքր քաղաքների աղմկաշունչ հորձանուտում թե գյուղերի անդորր խաղաղության գրկում նա գործում է՝ խորախորհուրդ լռության մեջ: Լույսը հազիվ է թեքվում հովտի վրայով, երբ Հայրապետի քայլերն արդեն շոյում են մաշված հողի երեսը... Նա չի խոսում, երբ ուրիշները խոսում ու շատախոսում են: Քարը դնում է քարի վրա, մինչև որ քարերից խունկ ու աղոթք են սկսում բարձրանալ...

Նրա լռությունը հողի լռություն է՝ համբերատար, լեռան համառություն է, ժայռի կարծրություն... Եվ ամեն անգամ, երբ քարերը խոսուն տաճարներ են դառնում, երբ լռությունը լցվում է շողով ու շարականով, մեգը նահանջում է, խավարը՝ անէանում, ու ճախրում է հոգևոր խինդը: Իսկ Հայրապետը մնում է նույնը՝ հողի պես համեստ, Աստծո պես՝ անտես...

Քարերը լռում են՝ պահպանելով խնամքով անթեղված բազում պատմություններ, այնպես, ինչպես ամպերն են ծրարում ամեհի լեռների գագաթները, իսկ ընդերքում հոսող ջուրը շարունակում է կենդանություն տալ նրանց՝ շաղախելով հավատքի ու հույսի մաքրամաքուր ջերմով: Սուրբ Էջմիածնի լույսի ներքո՝ Հայրապետի հայացքի տակ, ամեն հայի հոգի խաղաղվում է՝ գտնելով իր տեղը, ուր անխախտ է ոչ միայն անցյալի հուշը, այլև՝ ապագայի հույսը:

Այդ լույսը երբևէ չի մարում. ապրում է մեզանում, հողում, ջրի ու քարի մեջ, թևածում երկնքում՝ օրհնաբեր հիշեցումով, որ մեր արմատներն ամուր փարված են այս հողին, մեր հոգին՝ հայոց հավատքի անսասան վեմին ու գմբեթին...

Իսահակ վարդապետ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայոց բանակ-Եկեղեցի կապը՝ Գարեգին Երկրորդ Վեհափառի գործունեության զարկերակ

«Տարակույս չունենաք. ինչպես անցյալում, այնպես և այսօր ու ապագայում հայ հոգևորականը լինելու է հայ զինվորի կողքին, լինելու է առաջնագծում»:

Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոս

Մարտական հենակետ, 2022 թ., 31 դեկտեմբերի

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության ընթացքում Հայ Եկեղեցին՝ դարավոր ավանդույթների պահպանմամբ ու ներքին զարգացման օրինաչափությամբ, գործում է իբրև ազգային եկեղեցի՝ ինքնադրսևորվելով որպես ազդեցիկ կառույց թե՛ մեր ներքին կյանքում, թե՛ արտաքին աշխարհում: Համազգային խնդիրները մշտապես եղել են Վեհափառի հոգածության ներքո՝ Հայոց ցեղասպանության ճանաչումից և դատապարտումից մինչև Արցախի հիմնախնդրի խաղաղ ու արդար կարգավորում, ազգային ինքնության պահպանումից մինչև հայրենյաց սահմանների պաշտպանություն:

Նորին Սրբության մշտառկա ուշադրության և հոգածության ներքո է Հայոց բանակը: Հայ զինվորականին հոգևոր աջակցություն ցուցաբերելը, նրան բարոյական մենակության չմատնելը, թե՛ խաղաղության, թե՛ պատերազմների ժամանակ բանակի կողքին լինելը և ոգի ու վստահություն ներշնչելը Վեհափառի առաջադրած խնդիրներն են եղել Եկեղեցու հոգևոր դասին: Հոգևորականների ներկայությունը պատերազմի դաշտում բարձրացրել է բանակի մարտական ոգին, մահվան վախը հաղթահարելու զորություն հաղորդել, ներշնչել արդարացի պայքարում հաղթելու հավատով: Արցախյան 44-օրյա պատերազմին մասնակցել են ոչ միայն Զինված ուժերում սպասավորող գնդերեցները, այլև կամավորաբար առաջնագիծ են մեկնել Հայաստանի և սփյուռքի թեմերում ծառայող 100-ից ավել հոգևորականներ:

Հայ Եկեղեցին Գարեգին Կաթողիկոսի օրոք գործում է Աստված և հայրենիք գաղափարապաշտության ոգով՝ հայրենասիրության և հայրենապահպանության հունդեր սերմանելով ամենուր և Ավետարանն ու Հայոց պատմությունը գերագույն գրքեր կարգելով:

Դեռևս Գարեգին Բ-ի գահակալության սկզբում՝ 2000 թ. մարտին, ՀՀ Կառավարության և Հայ Եկեղեցու միջև ստորագրվեց փոխհամաձայնագիր, որով հստակեցվեցին 1997 թ. երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի և ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի համատեղ նախաձեռնությամբ ստեղծված ԶՈՒ հոգևոր առաջնորդության գործունեությունը, կառուցվածքը, խնդիրներն ու նպատակները: «Քրիստոնյա Հայաստան»-ին տված իր հարցազրույցում ՀՀ ԶՈՒ այսօրվա հոգևոր առաջնորդ Տ. Մովսես վրդ. Սարգսյանն ասում է. «Չնայած թշնամուն ոչնչացնելու ժամանակակից զենքերին ու միջոցներին՝ պատերազմի և ռազմական գործողությունների ամենակարևոր տարրը միշտ կլինի անձը, և մարտի հաջողությունը մեծապես կախված կլինի նրա հոգեվիճակից: Ուստի անհրաժեշտ է զորքերի կրթության ու պատրաստության գործում հատուկ ուշադրություն դարձնել հոգևոր դաստիարակության գործոնին, որն իր լուրջ ազդեցությունն ունի զինվորի բարոյահոգեբանական նկարագիրը ձևավորող բոլոր հիմնարար որակների ու տարբեր իրավիճակներում ցուցաբերվող վարքագծի ձևավորման վրա: Հետևաբար՝ բանակը ոչ միայն ռազմական մասնագիտության և ֆիզիկական պատրաստության դպրոց է, այլև հայրենասիրության վրա հիմնված հոգևոր-բարոյական վսեմ որակների կրթման համակարգ, ինչն անհնար է առանց Սուրբ Եկեղեցու մասնակցության: Որքան էլ հրամանատարներն իրենց ենթակա անձնակազմի պատրաստման գործում լինեն ջանասեր ու փորձառու, միևնույն է, զինծառայողներին քրիստոնեական առաքինություններով, բարոյական արժեհամակարգով օժտելու համար անհրաժեշտ է հոգևոր դաստիարակություն, քրիստոնեական հավատի քարոզչություն, որոնք և կատարում են մեր հոգևորականները» (ՔՀ, 2024, նոյեմբեր Ա, թիվ 21, էջ 6):

Հիրավի, քրիստոնեական ճիշտ դաստիարակությունը հույժ կարևոր նշանակություն ունի զինվորի բարոյահոգեբանական բարձր պատրաստականության գործում: Ոգեշունչ է քրիստոնեությունը, իսկ ոգին զինվորի մեծագույն զենքն է: Քրիստոս Ինքը գաղափարի և ուժի հերոս է, որ զոհաբերեց Իրեն՝ մարդկության հանդեպ մեծ սիրուց դրդված: Ավետարանի քարոզը գնդերեցի առաքելությունն է՝ որպես սիրո և ուժի կրոնի քարոզ: Բարոյական ուժով գոտեպնդել բանակին. ահա ԶՈՒ հոգևոր սպասավորի գլխավոր խնդիրը և գործունեության առանցքը:

Զինծառայողների՝ քրիստոնյա բարոյահոգեբանությամբ և ազգային-հայրենասիրական ոգով վերադաստիարակության կարևորության գիտակցումով արդեն 27 տարի է, ինչ ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդությունը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Վեհափառի գլխավորությամբ, իր հոգեխնամ առաքելությունն է իրականացնում ՀՀ զինված ուժերում:

ԶՈՒ հոգևոր առաջնորդության զարգացմանն ու արդյունավետությանն ուղղված Վեհափառի ջանքերից բացի՝ առանձնակի կարևորություն ունեն Գարեգին Երկրորդի հայրապետական անմիջական այցերը զորամասեր ու հոսպիտալներ: Վեհափառը պարբերաբար լինում է զորամասերում, մարտական ծառայության դիրքերում, օրհնում և խրախուսում զինանձնակազմին, տեղում ծանոթանում ծառայության պայմաններին և իրավիճակին:

Գարեգին Երկրորդ Վեհափառի այցը վիրավոր զինվորներին, Երևանի Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ, 2016 թ., 4 ապրիլի

Հայրապետական այցերը հոսպիտալներ վիրավոր կամ հիվանդ զինվորներին տեսակցելու և զորակցելու նպատակ ունեն: Վեհափառի ջանքերով պատերազմում ծանր վիրավորում ստացած զինծառայողներ բուժում են ստացել և շարունակում են ստանալ արտասահմանում: Այսպես, 2018 թ. ընթացքում շուրջ 9 զինհաշմանդամներ Նորին Սրբության օրհնությամբ մեկնել են Կալկաթա և ստացել անհրաժեշտ բժշկական միջամտություն:

Վեհափառի սրբազան պարտավորվածությունների օրակարգում են եռաբլուր մշտական այցերը և զոհված ու անհայտ կորած զինվորների ընտանիքներին հոգածության առանցքում պահելը:

Գարեգին Երկրորդ Հովվապետի՝ զորամաս և հոսպիտալ այցերից առանձնացնենք արխիվային մի քանի փաստեր՝ ցույց տալու դրանց ժամանակագրական և բովանդակային հարուստ տարողությունը:

1999 թ., 30 դեկտեմբերի

Ամանորին և Սուրբ Ծնունդին ընդառաջ նորաօծ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց ՀՀ բանակի N զորամաս և հանրապետական հոսպիտալ:

2014 թ., 27 հունվարի

Բանակի տոնի նախօրեին Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Երևանի զինվորական հոսպիտալ: Վեհափառին ուղեկցում էր ՊՆ նախարարը:

2016 թ., 6 սեպտեմբերի

Գարեգին Բ Կաթողիկոսը Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների ուղեկցությամբ սեպտեմբերի 6-ին Արցախում այցելեց ԼՂՀ Պաշտպանության բանակի N զորամաս: Ամենայն Հայոց Հովվապետին ու ԳՀԽ անդամներին դիմավորեց և ողջունեց ԼՂՀ Պաշտպանության նախարար գեներալ-լեյտենանտ Լևոն Մնացականյանը: Այնուհետև շարված զորքին իր հայրապետական օրհնությունը բաշխեց Գարեգին Բ Կաթողիկոսը:

«Պահպանիչ» աղոթքից հետո Նորին Սրբությունն իր պատգամը հղեց զինվորներին՝ ուրախություն հայտնելով հանդիպման հնարավորության համար. «Եկել ենք մեր գնահատանքը և սերը արտահայտելու ձեզ, նաև բերելու ձեզ մեր խոնարհումը ձեր իրագործած սխրանքների համար, որոնց մենք ականատես դարձանք ապրիլյան պատերազմի օրերին, թե ինչպիսի քաջազունությամբ դուք կասեցրիք ադրբեջանական զորքերի հարձակումը, ետ շպրտեցիք նրանց մեր սահմաններից: Մեր խոնարհումն ենք բերում քաջարի զինվորներին՝ մեր ազգի հերոս զավակներին, որոնք իրենց կյանքով այդ օրերին պաշտպանեցին մեր Հայրենիքը: Թող երկնքից միշտ լույս և օրհնություն իջնի նրանց շիրիմներին.... Փա՛ռք ձեզ, հայոց բանակի քաջարի մարտիկներ: Վերստին փա՛ռք ձեր ընկերներին, որոնք հանգչում են Արցախի և Հայաստանի նվիրական և սուրբ հողում»:

Նշելով, որ հայրենիքի պաշտպանությունը սրբազան ու վեհ ծառայություն է, Նորին Սրբությունը կարևորեց հավատի զորացումը. «Հավատով է, որ մեր ժողովուրդը տարել է իր պատմության բոլոր հաղթանակները՝ Վարդանանց պատերազմից սկսյալ մինչև Սարդարապատ և Արցախ: Արցախում ապրիլյան պատերազմի օրերին մեր զինվորների մեջ մենք տեսանք այդ զորեղ հավատի ճառագումը.... Շնորհիվ հաղթական ոգու և հավատի՝ մեր զինվորները կարողացան հաղթական ելնել այդ պատերազմից:

Սիրելինե՛ր, այս հողը սուրբ ու նվիրական է, որովհետև այստեղ ունենք նվիրական սրբություններ՝ դարերով կերտված հավատավոր մեր զավակների կողմից: Այս հողը սուրբ ու նվիրական է, որովհետև այստեղ հեղվել է քրտինքը և նաև արյունը մեր պատվական զավակների և մեր նախնիների: Այսօր դուք եք պաշտպաններն այս նվիրական հայրենիքի: Այս սահմանները պետք է անառիկ պահել՝ նվիրումով, հավատով և խիզախ, հերոսական ոգով, որ կրում եք ձեր անձերում»,— հավելեց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը վերջում զինվորներին հավաստիացրեց. «Դուք մշտապես մեր աղոթքներում եք, մենք սիրում ենք ձեզ: Ձեզ սիրում է ազգի յուրաքանչյուր զավակ թե՛ հայրենիքում, թե՛ սփյուռքի հեռավոր ափերում: Մեր ազգն իր սիրով ու ոգով, իր կարելիություններով ընծայաբերումներով և հանձնառություններով միշտ ձեր կողքին է: Ձեզ հետ է նաև մեր Եկեղեցին՝ իր հնարավորություններով ու կարողություններով, ինչպես նաև իր սպասավորներով»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայցեց Բարձրյալին, որ միշտ հաղթական լինի հայ զինվորի բազուկը, և Աստված անվտանգ և բոլոր փորձություններից հեռու պահի երիտասարդներին, որպեսզի, փառքով և պատվով ավարտելով իրենց ծառայությունը, վերադառնան ընտանիք՝ ուրախություն պարգևելով իրենց ծնողներին և ողջ ժողովրդին: Նորին Սրբությունը մաղթեց, որ Տերը յուրաքանչյուր զինվորի կյանքի ընթացքը զարդարի հաջողություններով ու հաղթանակներով, որպեսզի միշտ շեն լինի Հայոց աշխարհը, հզոր՝ Հայոց բանակը, և հայ ժողովուրդը խաղաղության մեջ ապրի ու կերտի իր բարօր կյանքը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները զրույց ունեցան զինվորների հետ:

2018 թ., 7 հուլիսի

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց հայ-ադրբեջանական միջպետական սահմանի նախիջևանյան հատվածի տարբեր մարտական դիրքեր: Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմավորեցին ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի տեղակալ գեներալ-լեյտենանտ Ստեփան Գալստյանը, N զորամասի հրամանատարական կազմը և ՀՀ ԶՈՒ Գերաշնորհ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը՝ գնդերեցների ուղեկցությամբ:

Բանակի սպաների և զինվորների հետ զրույցում Վեհափառ Հայրապետն իր մտահոգությունը հայտնեց Ադրբեջանի կողմից վերջին շաբաթներին սանձազերծված լարվածության աճի վերաբերյալ: Նորին Սրբությունը, աղոթելով հայրենի երկրի խաղաղության համար, երկնավորին հայցեց, որ հայոց զորականների բազուկը միշտ հաղթական լինի, և կարողանան իրենց քաջարի ոգով պաշտպանել Հայոց աշխարհի խաղաղությունը, իրենց մայրերի և քույրերի անդորրը:

Դիրքապահների ուղեկցությամբ տեղում դիտարկելով վերջին զարգացումները՝ Գարեգին Բ Կաթողիկոսն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց մարտական հերթապահություն իրականացնող զինվորներին և նրանց ընծայեց խաչեր ու Աստվածաշունչ մատյաններ՝ մաղթելով խաղաղ ու անվտանգ ծառայություն: ➥ էջ 9

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի էկումենիկ և միջկրոնական գործունեությունը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական հարուստ գործունեության մեջ իր ուրույն տեղն ունի էկումենիկ և միջկրոնական երկխոսություններին Հայ Առաքելական Եկեղեցու ազդեցիկ մասնակցությունը: Վեհափառ Հայրապետի կաթողիկոսության տարիները նշանավորվել են քույր Եկեղեցիների հետ հարաբերությունների առավել սերտացմամբ, ոչ դավանակից քրիստոնյա Եկեղեցիների հետ քրիստոնեական փոխգործակցության ոգով հիմնված հարաբերությունների հաստատմամբ ու միջեկեղեցական խոշորագույն կառույցների կյանքում մեր Եկեղեցու արժեքավոր և ուրույն ներդրմամբ: Այդ հարաբերությունները բազմաոլորտ ընդգրկում ունեն՝ ներառելով պաշտոնական-արարողակարգային, կրթական, սոցիալական, հոգևոր ժառանգության և փորձառության փոխանակման, աստվածաբանական երկխոսությունների, միջազգային խաղաղության խթանման և այլ բնագավառներ: Սույն հոդվածը կարճամփոփ և ընդհանրական ներկայացումն է այն հսկայական աշխատանքի, որ տարվել է Գարեգին Բ Հայրապետի կողմից էկումենիկ և միջկրոնական հարաբերությունների դաշտում:

Գարեգին երկրորդ Ամենայն Հայոց Հայրապետը Հռոմի Ֆրանցիսկոս Պապի հետ, էկումենիկ արարողություն և խաղաղության աղոթք Երևանի Հանրապետության հրապարակում, 2016 թ., 25 հունիսի

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա-ի հետ, Մոսկվա, 2021 թ., 10 հոկտեմբերի

Խոսելով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի էկումենիկ և միջկրոնական գործունեության շուրջ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Հոգեշնորհ Տ. Գարեգին վարդապետ Համբարձումյանն ընդհանրացնում է. «Նորին Սրբություն Գարեգին Բ-ի առաջնորդությամբ Հայ Առաքելական Եկեղեցին շարունակում է Ավետարանի ճշմարտության վկայությունը՝ միաժամանակ կառուցելով փոխըմբռնման, համագործակցության և համերաշխության կամուրջներ տարատեսակ դավանական և կրոնական համայնքների միջև: Նորին Սրբությունը, իր անդուլ ներգրավվածությամբ էկումենիկ և միջկրոնական երկխոսությանը, Հայ Եկեղեցու պատմական առաքելության ձայնն է հնչեցրել՝ խթանելու արդարացի խաղաղությունը, պաշտպանելու ժողովուրդների ազգային արժանապատվությունը և պահպանելու մեր հոգևոր-մշակութային ժառանգությունը: Այսօր ևս, երբ աշխարհը կանգնած է նորանոր մարտահրավերների առաջ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ շարունակում է վկայել այն ճշմարտությունը, ըստ որի՝ հավատքը պետք է դառնա հաշտության, կարեկցանքի ու հույսի աղբյուր ողջ աշխարհում»:

Վեհափառ Հայրապետի դիրքորոշումը միջեկեղեցական հարաբերությունների վերաբերյալ արտահայտված է դեռևս իր հայրապետական առաջին կոնդակում. «Շարունակելու ենք գործուն մասնակցություն ունենալ միջեկեղեցական կյանքում՝ հավատարիմ համայն աշխարհում խաղաղության պահպանման, ժողովուրդների՝ եղբայրական սիրով համագործակցության, մեր Եկեղեցու ավանդներին: Նոր ժամանակների տարաբնույթ մարտահրավերների առջև քրիստոնեական քույր Եկեղեցիների հետ մեր ջանքերը միավորած՝ հետևողականորեն իրականացնելու ենք հոգևորի լույսով մարդկության կյանքի իմաստավորման սուրբ առաքելությունը՝ հանուն քրիստոնեական սկզբունքների կենսագործմամբ բարու հաղթանակի և համընդհանուր երջանկության» («Էջմիածին», 2000, Բ, էջ 3–9):

2000 թ. փետրվարի 29-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ռուս Ուղղափառ Եկեղեցու գահակալ, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ի եղբայրական հրավերով մեկնեց Մոսկվա: Այս հանդիպումով սկիզբ դրվեց Ռուս Ուղղափառ Եկեղեցու հետ բազմամյա եղբայրական հարաբերությունների առավել խորացմանը, որոնք հետագայում պտղաբեր արդյունքներ տվեցին՝ նպաստելով Ռուսաստանի Դաշնությունում Հայ Եկեղեցու թեմերի առավել արդյունավետ գործունեությանը, որ հոգևոր սնունդ են տալիս ռուսաստանաբնակ միլիոնավոր հայորդիների:

2000 թ. նոյեմբերի 8-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հռոմում հանդիպեց Հովհաննես-Պողոս Բ Պապի հետ: Հանդիպման ժամանակ Հռոմի Պապը Կաթոլիկ Եկեղեցու կողմից Հայ Եկեղեցուն նվիրաբերեց Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքները: Այցի ընթացքում Վեհափառը նաև մասնակցեց միջեկեղեցական աստվածաբանական գիտաժողովի: Այս հանդիպումը մեկնարկն էր Կաթոլիկ Եկեղեցու հետ նոր՝ մինչ այս աննախադեպ մակարդակի ջերմ և գործնական հարաբերությունների:

2001 թ. փետրվարի 23-ին Վեհափառ Հայրապետը անդրանիկ պաշտոնական այցով մեկնեց Ժնև՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի պաշտոնական գրասենյակ: ԵՀԽ-ի հետ հարաբերությունները հաջորդ տասնամյակներում նշանավորվել են բազմաթիվ ծրագրերին Հայ Եկեղեցու գործուն մասնակցությամբ և հայկական ազգային-եկեղեցական հարցերի շուրջ ԵՀԽ ունեցած հայասնպաստ դիրքորոշումներով:

2001 թ. սեպտեմբերի 25-ին քրիստոնեության՝ Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարություններին մասնակցելու նպատակով Գարեգին Բ Կաթողիկոսի հրավերով Սուրբ Էջմիածին ժամանեց Հռոմի Պապ Հովհաննես-Պողոս Բ-ն: Սա պատմության մեջ Հռոմի քահանայապետի առաջին այցն էր Հայաստան: Պապն իր խոսքում նշեց. «Համայն Կաթոլիկ Եկեղեցին կիսում է Ձեր և բոլոր հայերի անհուն ուրախությունը՝ այս մեծապես սիրեցյալ երկրում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առիթով» («Էջմիածին», 2001, Թ, էջ 53–63): Վերոնշյալ տոնակատարությունների ժամանակ Հայաստան ժամանեցին նաև այլ նշանավոր եկեղեցապետեր՝ ավելի քան 35 Եկեղեցիներից ու կրոնական կազմակերպություններից: Նրանց թվում էին Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Բարթողոմեոս Առաջինը, Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Հույն Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Պետրոս Յոթերորդը, Ասորի Ուղղափառ Եկեղեցու պետ Իգնատիոս Առաջին Զակկան, Հնդիկ Մալանկարա Եկեղեցու պետ Բասիլեոս Մար Թովմա Երկրորդը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու պետ Ալեքսի Երկրորդը, Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պետ Շենուդա Երրորդը, Ռումին Եկեղեցու պետ Թեոկտիստ Առաջինը, Անգլիկան Եկեղեցու պետ, Քենթբերիի արքեպիսկոպոս Ջորջ Քերրին, Ֆինլանդիայի Լյութերական Եկեղեցու պետ, արքեպիսկոպոս Ջուկկա Պաարման, Վրաց Եկեղեցու պետ Իլյա Երկրորդը, Դանիայի Լյութերական Եկեղեցուց Կոպենհագենի եպիսկոպոս Էրիկ Նորման Սվենդսենը, ԵՀԽ գլխավոր քարտուղար դոկտոր Կոնրադ Ռայզերը և ուրիշներ:

Գարեգին Բ Կաթողիկոսի հետևողական գործունեության արդյունքում 2005 թվականին՝ Մեծ եղեռնի 90-ամյակին, Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսը (ԵԵԿ) դատապարտեց Հայոց ցեղասպանությունը: Սա կարևոր իրադարձություն էր, որ փաստում էր՝ միջեկեղեցական հարաբերությունները միտված են քրիստոնեական փոխներդաշնակությանը և միմյանց ազգային-հոգևոր հոգսերը կիսելուն ու դրանց շուրջ արիաբար դիրքորոշում հայտնելուն:

2007 թ. սեպտեմբերի 23–28-ը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց ԵՀԽ գործադիր կոմիտեի հերթական ժողովը:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց Քույր եկեղեցիների և միջեկեղեցական կազմակերպությունների հետ կապերի առավել զորացման համար՝ նշելով, որ Հայ Եկեղեցին գործուն մասնակցություն է բերում միջեկեղեցական հարաբերությունների հաստատմանն ու լավագույնս ներկայացված է ԵՀԽ կառույցներում և համանման մյուս կազմակերպություններում:

Հայոց հոգևոր առաջնորդը գնահատանքով արձանագրեց, որ Հայ Եկեղեցին մեծապես օգտվել է այդ համագործակցությունից: ԵՀԽ-ն մշտապես սիրով ու պատրաստակամությամբ արձագանքել է Հայ Եկեղեցու բարձրացրած բոլոր խնդիրներին, ինչպես՝ Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը, սոսկալի երկրաշարժի օրերին եղբայրական օգնությունը և Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանությունը («Էջմիածին», 2007, Թ, էջ 12–15):

2013 թ. նոյեմբերի 4-ին Գարեգին Բ Հայրապետը Հարավային Կորեայի Բուսան քաղաքում տեղի ունեցած ԵՀԽ համաժողովի ընթացքում ընտրվեց ԵՀԽ նախագահ՝ ութ տարի ժամկետով:

2015 թ. ապրիլի 12-ին Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վատիկանում մասնակցեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով Սուրբ Պետրոսի տաճարում Ֆրանցիսկոս Պապի մատուցած Սուրբ Պատարագին: Արարողության ընթացքում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հայր Սուրբ Գրիգոր Նարեկացին Կաթոլիկ Եկեղեցու կողմից հռչակվեց «Տիեզերական Եկեղեցու վարդապետ»: Պատարագի ավարտին հայկական ծեսով կատարվեց հոգեհանգստյան արարողություն Մեծ եղեռնի նահատակների համար («Էջմիածին», 2015, ապրիլ Ա, էջ 4–5): Գրիգոր Նարեկացուն Կաթոլիկ Եկեղեցու վարդապետ հռչակելու հանգամանքն իրադարձային էր Հայ Եկեղեցու հարուստ աստվածաբանական ավանդույթն ու ժառանգությունը աշխարհին մատուցելու և առավել ճանաչելի դարձնելու առումով: Այս հռչակումը համաշխարհային գիտական շրջանակներում մեծացրեց հայ աստվածաբանության հանդեպ հետաքրքրությունը:

2016 թ. հունիսի 24-ին արդեն Հռոմի Ֆրանցիսկոս Պապը եռօրյա այցով եկավ Հայաստան՝ «Այց առաջին քրիստոնյա երկիր» կարգախոսով: Այցի ընթացքում Գարեգին Բ Հայրապետի և Ֆրանցիսկոս Պապի մասնակցությամբ էկումենիկ աղոթք կատարվեց Խոր Վիրապի վանական համալիրում, իսկ հունիսի 26-ին երկու եկեղեցապետերը համատեղ հռչակագիր ստորագրեցին, որը վկայակոչում էր Վատիկանի կողմից Հայոց ցեղասպանության ավելի վաղ ճանաչումը. Ֆրանցիսկոս Պապի՝ 2015 թ. ապրիլի 12-ի հանդիսավոր Պատարագը և 2001 թ. սեպտեմբերի 27-ին Գարեգին Երկրորդի և Հովհաննես Պողոս Երկրորդի ստորագրած Համատեղ հայտարարությունը: Հայոց ցեղասպանության ճանաչման ևս մեկ Համատեղ հաղորդագրություն ստորագրվել էր 2000 թ. նոյեմբերի 29-ին Հովհաննես Պողոս Երկրորդի և Գարեգին Երկրորդ Կաթողիկոսի կողմից:

2019 թվականին՝ «Կրոնները հանուն խաղաղության» միջազգային միության 10-րդ համաժողովի ընթացքում, Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը 125 երկրների շուրջ 700 պատվիրակների կողմից ընտրվեց միության պատվավոր նախագահ:

2021 թ. սեպտեմբերի 9–10-ին Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ «Միջազգային կրոնական ազատություն և խաղաղություն» խորագրով միջազգային համաժողով: Համաժողովի նպատակը համայն աշխարհի եկեղեցական, գիտական և քաղաքական հանրույթի ուշադրությունն Արցախում տեղի ունեցող անիրավությունների վրա սևեռելն էր: Համաժողովի ընթացքում Եկեղեցին բաձրաձայնեց Արցախի ժողովրդի ոտնահարված իրավունքների, Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության վանդալիզմի աղաղակող դեպքերի և Ադրբեջանի հակահայ քաղաքականության մասին: Նորին Սրբությունն իր բացման խոսքում նշեց. «Արդարև, առ Աստված մեր հավատի դրսևորումն են խաղաղությանն ուղղված մեր քայլերը, քանզի հավատն ինքը մարդու խաղաղության ուխտն է Աստծո հետ»:

2025 թվականի մայիսի 26–28-ին Ն. Ս. Օ .Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի առաջարկով Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը և Շվեյցարիայի Բողոքական Եկեղեցին մայիսի 26–28-ը Շվեյցարիայի Բեռն քաղաքում կազմակերպեցին «Կրոնական ազատություն. հայկական հոգևոր, մշակութային և պատմական ժառանգության պահպանումը Արցախում/Լեռնային Ղարաբաղում» խորագրով միջազգային համաժողով: ➥ էջ 11

Գարեգին Երկրորդ Վեհափառի ուխտագնացությունները

Ցուտով լրանալու է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի ձեռնադրության և օծման 26-ամյակը: Նրա գահակալության ընթացքում հարյուրավոր հայրապետական այցելություններ են եղել թե՛ Հայաստանում և թե՛ արտերկրում: Այդ բազմաբովանդակ այցելությունների շարքում առանձնահատուկ խորհուրդ ու նշանակություն ունեն Վեհափառի ուխտագնացությունները՝ իբրև հոգևոր ճամփորդություն դեպի Աստված՝ Բարձրյալի և սրբերի հետ ի խորոց սրտի հաղորդակցվելու, անցյալի սրբազան ժառանգության ներկայությունն զգալու և զորություն ստանալու՝ հայրապետական առաքելությունն ի նպաստ Եկեղեցու և հայրենիքի արդյունավորելու համար:

Գարեգին Երկրորդ Վեհափառը հայրապետական իր առաջին ուխտագնացությունը հայրենիքում կատարեց Օշական՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շիրիմին, 1999 թ. նոյեմբերի 27-ին, իսկ արտասահմանում՝ Սուրբ Երկիր՝ տերունակոխ սրբավայրեր:

Նոր ձեռնադրված Ամենայն Հայոց Կաթողիկոսը 2000 թ. հունվարի 14-ին մեկնեց Հորդանան, այնտեղից՝ Երուսաղեմ և ապա՝ Բեթղեհեմ, որտեղ էլ նախագահեց Սուրբ Ծննդյան արարողությունները: Այս ուխտագնացությունը պատմական յուրահատուկ իրադարձություն էր, որովհետև նախ՝ Հայոց Հայրապետի արտասահմանյան առաջին ուխտագնացությունն էր, և, բացի այդ, Վեհափառին ուղեկցում էր Հայաստանի Հանրապետության նախագահը, այսինքն՝ պատմական ուխտագնացություն էր՝ հոգևոր և պետական առաջնորդների գլխավորությամբ:

Երուսաղեմից վերադարձին Զվարթնոց օդանավակայանում Վեհափառ Հայրապետն իր այցի և տպավորությունների մասին այսպես է արտահայտվել. «Առաջին Մեր ուղևորությունը արտասահման, որ եղավ ուխտագնացություն Սուրբ Երկիր՝ Տերունակոխ Սուրբ վայրեր, բարեհաջող, խանդավառող ու գոտեպնդող ընթացք ունեցավ, և այսօր գոհունակ սրտով մեր աղոթքն ենք հղում առ Աստված՝ մեր Եկեղեցու շինության, մեր ժողովրդի բարօր կյանքի, մեր նվիրապետական Աթոռների պայծառացման և զորացման համար» («Էջմիածին», 2000, Ա, էջ 23–24):

Հայոց Հայրապետի հետագա ողջ գործունեությունը հիմնվել է Սուրբ Երկիր ուխտագնացության ընթացքում հոգևոր ներշնչանքի և աստվածաշնչյան գաղափարների վրա:

Հայրապետական ուխտի պատարագ Բեթղեհեմի Սուրբ Այրում, 2000 թ., 18 հունվարի

Հայրապետի առանցքային ուխտագնացություններից է նաև Վատիկան այցելությունը, որի ընթացքում Կաթոլիկ աշխարհին ներկայացվեցին Հայ Եկեղեցու դարավոր ավանդույթներն ու խաղաղասիրական տեսլականը: Վատիկանում, ինչպես իր բոլոր այցելությունների ժամանակ, Վեհափառ Հայրապետը բարձրաձայնել է Հայոց ցեղասպանության մասին՝ կարևորելով դրա դատապարտումը. «Հարության մեր սուրբ հավատքի զորությամբ մեր ժողովուրդը վերապրեց մեծ աղետը, իր դեմ նյութված չարիքը հաղթահարեց բարիք ստեղծելով ու կառուցելով և այսօր՝ նոր դարի շեմին, մարդկային արդարության հանդեպ հավատով սպասում է Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչմանն ու դատապարտմանը» («Էջմիածին», 2000, ԺԱ, էջ 9):

Հայրապետի զգացմունքային ուխտագնացություններից է Հայոց ցեղասպանության 86-րդ տարելիցին Դեր Զոր այցելությունը: Ուխտագնացությանը մասնակցում էր նաև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն: Ութսունվեց տարի առաջ հայրենիքից մահվան անապատներ աքսորված և նահատակված հարյուր հազարավոր հայերի մասունքների առկայությամբ Հայոց Վեհափառը ոգեկոչեց ցեղասպանության բոլոր զոհերի հիշատակը՝ ամրապնդելով նրանց սուրբ հռչակելու իր պատմական որոշումը. «Եկել ենք ուխտի, սրբազան երդման: Եկել ենք ձեր՝ Քրիստոսի խաչակիցներիդ հազարավոր անհայտ անունների հիշատակումով մեր ուխտն առ Աստված հաստատելու, համազգային մեր միասնականությունը նորոգելու և մեր հավատը զորացնելու արդարության հաղթանակի հանդեպ: Եկել ենք ասելու ձեզ, որ ամեն ապրիլի 24-ին, նաև այսօր, հայ ընտանիքներում զավակներ են ծնվում՝ հայորդիներ ու հայուհիներ, որ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու ավազանում մկրտվում են ձեր անուններով» («Էջմիածին», 2001, Դ, էջ 11):

Վեհափառի ուխտագնացություններն իրենց բնույթով ոչ միայն հոգևոր էին, այլև ազգային ու մշակութային: Դրանք դարձել են նաև կամուրջներ՝ Հայ Առաքելական Եկեղեցու և տարբեր երկրներում բնակվող հայկական համայնքների, ինչպես նաև տարբեր պետությունների ու Եկեղեցիների միջև:

Հայոց Հովվապետը հաճախ ուխտավորաբար մեկնել է նաև Հայաստանի ու Արցախի սրբավայրեր և հայկական սփյուռքի զանազան համայնքներ: Ամերիկայում թե Եվրոպայում, Մերձավոր և Հեռավոր Արևելքներում թե Ավստրալիայում այդ այցելություններն ընդգծել են Հայ Եկեղեցու ներկայությունն ու հոգածությունը հայության հանդեպ: Վեհափառը մշտապես հավատքի և հայրենասիրության պատգամներ է հղել այն հայորդիներին, որոնք, պատմական և սոցիալական տարբեր հանգամանքներով պայմանավորված, հեռու են հայրենիքից, սակայն մնում են կապված Հայ Առաքելական Եկեղեցու հետ: Վեհափառի ներկայությունը սփյուռքում դառնում էր հոգևոր խթան ազգային ինքնության պահպանման համար:

Նշանավոր են նաև Գարեգին Երկրորդ Կաթողիկոսի՝ Հայաստանի ուխտավայրեր այցելությունները: Վեհափառ Հայրապետն իր գահակալության սկզբում, կարևորելով Արցախի հայության հոգևոր պահանջներն ու զգալով Արցախ աշխարհի վանքերի գերբնական զորությունը, հովվապետական այցելությամբ մեկնել է Արցախի թեմ: Արցախ իր անդրանիկ այցելության ընթացքում նա հանդիպումներ է ունեցել Արցախի նախագահի և Ազգային ժողովի ներկայացուցիչների հետ: Հատկապես խանդավառ են անցել ժողովրդի հետ հանդիպումները: Հայոց Հովվապետն այցելել է մոտ մեկ տասնյակ գյուղեր ու քաղաքներ, զրուցել և գոտեպնդել արցախցիներին, հորդորել ամուր կառչել հայրենյաց հողին և Սուրբ Եկեղեցուն: Հատկանշական է Հայրապետի խոսքը Շուշիի Սուրբ Ղազանչեցոց մայր տաճարում. «Հինգ օր է, որ մենք աղոթում ենք մեր ժողովրդի զավակների հետ, այն ժողովրդի, որ ութսուն և ավելի տարիներ առիթ չի ունեցել աղոթքի կանգնելու իր սրբազան տաճարների մեջ. առիթ չի ունեցել իր աղոթքը միահյուսելու իր հոգևոր առաջնորդների և իր Հայրապետի՝ առ Աստված բարձրացող աղերսին ու խնդրանքին: Եվ ամենուր, ուր որ եղանք, տեսանք հոգու խնդություն, տեսանք բերկրանք ու ցնծություն մեր ժողովրդի զավակաց հոգիներում: Եվ թունդ առավ մեր սիրտը, ու նոր ուժգնությամբ, նոր ջերմեռանդությամբ մեր աղոթքը խունկի քուրաների հետ մեր սրտից բարձրացավ առ Աստված.... Եվ անսասան էր մեր հավատքը, և հայորդյաց շուրթերից առ Աստված բարձրացող աղոթքն ընդունելի էր որպես անուշահոտ զոհ Աստուծո առջև» («Էջմիածին», 2000, Թ, էջ 33):

Վեհափառ Հայրապետն իր ուխտագնացությունների և անթիվ այցելությունների ընթացքում ոչ միայն ժողովրդին փոխանցել է քրիստոնեության ոգին, այլև ինքն էլ ոգեշնչվել է հայ ժողովրդի ներքին զորությունից: Նորին Սրբությունը հաճախ է խոստովանել, որ յուրաքանչյուր այցելության ժամանակ, տեսնելով հավատավոր հայորդիների նվիրվածությունը, հոգևոր կյանքի ծարավն ու հայրենիքի և Սուրբ Եկեղեցու հանդեպ սերը, իր՝ հոգևոր առաջնորդի խանդավառությունը կրկնապատկվել է, դրանք իր համար դարձել են զորացման առիթ և ուժ: Նույնը զգացել են հավատացյալները՝ անմիջականորեն ստանալով Ամենայն Հայոց Կաթողիկոսի սերն ու օրհնությունը...

Վազգեն աբեղա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Երբ հավատքը գործ է դառնում...

Սուրբ Էջմիածնի բարեսիրական գործունեությունը 2014—2024 թթ.

Սոցիալական ծառայությունը քրիստոնեական առաքելության կարևորագույն ուղղվածություններից է, որի արմատները հասնում են մինչև Ավետարան: Բարեգործությունը, մերձավորի հանդեպ հոգատարությունը, կարոտյալներին աջակցելը քրիստոնեության էությունն են, քրիստոնեական սիրո և գթասրտության դրսևորումներ:

Սկզբնավորումից սկսած՝ Եկեղեցին գիտակցել է իր կոչումը՝ լինել ոչ միայն հոգևոր ուսուցիչ, այլև հենարան բոլոր տառապողներին երկրային կյանքում: Եկեղեցու բարեսիրությունը բխում է Հիսուս Քրիստոսից, Նրա խոսքից ու գործից: Լեռան քարոզում Հիսուս կոչ էր անում հոգ տանել աղքատների, ծարավածների, հիվանդների, գերեվարվածների և սովյալների համար (Մատթ. Իե 35–40): Քրիստոս միայն չխոսեց սիրո մասին, այլև գործով անձամբ ցույց տվեց ճշմարիտ վարք՝ բուժելով հիվանդներին, կերակրելով սովյալներին, մխիթարելով վշտացածներին: Ուստի, Հիսուսի կյանքը մարդկանց ծառայելու լավագույն օրինակն է:

Առաքյալները ևս անմասն չմնացին իրենց Ուսուցչի նմանօրինակ ծառայությունից: Սրա վառ ապացույցն է «Գործ առաքելոց»-ում Վաղ Եկեղեցու կազմավորման նկարագրությունը, որտեղ «ամեն բան ընդհանուր էր» (Գործք Բ 44–45):

Այսօր, երբ լսում ենք «եկեղեցի» բառը, շատերիս մտքում ծագում է պատկեր՝ գմբեթավոր շենք, աղոթք, ծես, մոմ... Սակայն դա միայն արտաքին կողմն է: Իրական Եկեղեցին կենդանի համայնք է՝ կազմված այն հավատացյալներից, որոնք միավորված են սիրով ի Քրիստոս: Իսկ սերը, ինչպես գրում է Հակոբոս առաքյալը, դրսևորվում է ոչ միայն խոսքով, այլև գործով. «Հավատն առանց գործերի մեռած է» (Հակ. Բ.26):

Ինչպես Քրիստոս կերակրում, բժշկում, մխիթարում էր մարդկանց, այդպես էլ Եկեղեցին այսօր կոչված է ծառայելու իր զավակներին ամենատարբեր ձևերով: Եկեղեցու սոցիալական ծառայությունը գործում է՝ կարիքավորներին օգնություն ցուցաբերելու, տկարներին աջակցելու, հիվանդների, որբերի, այրիների, անօթևանների, դատապարտյալների, արտաքսվածների, միայնակների, տարեցների ու հաշմանդամների հանդեպ հոգածություն դրսևորելու ուղղությամբ: Սոցիալական ծառայությունը պարզապես սոցիալական աշխատանք չէ: Քրիստոնյայի համար այն հավատքի արտահայտություն է և վկայություն Հիսուս Քրիստոսի մասին: Աստծու հանդեպ սերն անպայման արտահայտվում է մերձավորի հանդեպ սիրով: Սա անձնական վերափոխման, հոգևոր աճի և Աստծուն՝ այլ մարդու կերպարանքով հանդիպելու ճանապարհն է: Ինչպես գրել է Սուրբ Հովհաննես Ոսկեբերանը. «Եթե դու Քրիստոսին չես տեսնում տաճարի դռան մոտ գտնվող աղքատ մարդու մեջ, Նրան չես գտնի նաև սկիհի մեջ»:

Մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոս Ավետարանում ասում է. «Քաղցած էի, և ինձ ուտելիք տվիք, ծարավ էի, և ինձ ջուր տվիք՝ խմելու. օտար էի, և ինձ ձեր մեջ առաք, մերկ էի, և ինձ հագցրիք, հիվանդ էի, և ինձ տեսնելու եկաք, բանտում էի, և ինձ այցի եկաք» (Մատթ. Իե 35–36): Եվ երբ ունկնդիրներն այս խոսքերից զարմացան, Նա պատասխանեց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ, ինձ համար արեցիք» (Մատթ. Իե 40): Ահա Եկեղեցու և առհասարակ սոցիալական ծառայության իրական էությունը՝ յուրաքանչյուր տառապողի մեջ տեսնել Հիսուս Քրիստոսին:

Սուրբ հայրերն ասում են՝ անհնար է սիրել Աստծուն՝ առանց սիրելու մարդուն: Առաջին դարերում Եկեղեցին նվիրատվություններ էր հավաքում ոչ թե շենքեր կառուցելու, այլ այրիներին, որբերին և գերիներին օգնելու համար: Եվ կարոտյալներին աջակցելու այս ավանդույթը շարունակվում է նաև նորագույն ժամանակներում: Այսպես, ուղղափառ, կաթոլիկ և բողոքական համայնքները հիմնեցին բարեգործական կազմակերպություններ, անօթևանների համար տներ, դպրոցներ և հիվանդանոցներ:

Տարբեր քրիստոնեական հարանվանություններ սոցիալական ծառայությունն ընդունում և իրականացնում են ընդհանուր գաղափարով, սակայն տարբեր շեշտադրումներով: Ուղղափառությունը կարևորում է անձնական զոհաբերությունը, գթասրտությունը և հոգևորի ու սոցիալականի համատեղ գործունեությունը: Վերջին տարիներին Ռուս Ուղղափառ Եկեղեցին ակտիվորեն զարգացնում է սոցիալական ծառայության կենտրոններ, հիմնում քույրություններ, ապաստարաններ, կամավորական շարժումներ: Կաթոլիկ Եկեղեցին ստեղծել է «Caritas» լայնաճյուղ ցանցը՝ աշխարհի խոշորագույն քրիստոնեական բարեգործական կազմակերպությունը: Կաթոլիկները մեծ ուշադրություն են դարձնում սոցիալական արդարությանը, մարդու իրավունքների պաշտպանությանը և աղքատության դեմ համակարգված պայքարին: Բողոքականները՝ հատկապես ավետարանականները, եռանդուն ծավալում են գործնական օգնություն՝ հաճախ հիմնվելով կամավորական նախաձեռնությունների և փոքր խմբերի վրա: Բողոքականները հակված են համատեղելու սոցիալական ծառայությունն ավետարանչությանը:

Պատմությունը բազմաթիվ օրինակներ է վկայում, երբ Հայ Եկեղեցին դարձել է հույսի աղբյուր ամենադժվար ժամանակներում: Պատերազմների և սովի, հալածանքների և համաճարակների տարիներին Հայոց Եկեղեցին լույս էր բերում այնտեղ, որտեղ այլևս ոչ ոք չէր սպասում դրան: Այսօր նույնպես շարունակվում է դա:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական բարձր տնօրինությամբ, իրականացրել է բազմաթիվ սոցիալական ծրագրեր՝ կրթական, առողջապահական, մարդասիրական՝ ուղղված հիվանդներին, անապահով ընտանիքներին, տեղահանվածներին՝ արցախցիների, սիրիահայերի, իրաքահայերի, սփյուռքյան որոշ համայնքների, զինվորականներին, զոհված զինվորների ընտանիքներին, վիրավորներին, ծնողազուրկ երեխաներին, տարեցներին, ուսանողներին: ➥ էջ 10

Ս. Էջմիածնի կրթադաստիարակչական առաքելությունը

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին դարեր շարունակ եղել է ոչ միայն հոգևոր, այլև ազգային ինքնության պահպանման հենասյուներից մեկը: Իր հոգևոր առաքելությանն առընթեր՝ Հայ Եկեղեցին, ոսկեդարից սկսած, ծավալել է նաև կրթադաստիարակչական գործունեություն, եղել հայ ժողովրդի կյանքի կրթական հիմնական շարժիչ ուժը: Այդ առաքելությունը շարունակվում է նաև արդի փուլում՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության շրջանում:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Հայրապետի գահակալության ընթացքում՝ 1999 թվականից առայսօր, նոր բովանդակություն ու զարգացման թափ ստացավ Մայր Աթոռի կրթական և դաստիարակչական առաքելությունը՝ կարևորելով թե՛ ավանդական հոգևոր կրթության վերակազմավորումը, թե՛ ժամանակակից կրթամշակութային մարտահրավերներին համարժեք արձագանքը: Սակայն մինչև բուն հարցին անդրադառնալը՝ կարևոր ենք համարում համառոտ ներկայացնել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կրթադաստիարակչական պատմական առաքելությունը, որի վրա խարսխված է ժամանակակից Հայ Եկեղեցու բարեկրթական համակարգը՝ ավանդականի ու նորարարականի արդյունավետ համադրումներով:

Այսպես, միջնադարյան շրջանի կրթությունը ձևավորվել է Հայ Եկեղեցու հովանու ներքո՝ վանական դպրոցների, բարձրագույն կրթօջախների և ձեռագրության կենտրոնների միջոցով: Պատմական ամփոփ ակնարկի դեպքում կունենանք հետևյալ պատկերը.

Ա. Վանական դպրոցներ (V–VII դարեր). առաջին դպրոցները բացվել են Վաղարշապատում, Դվինում, Սյունիքում և Արտաշատում:

Բ. Համալսարաններ.

1. Գլաձորի համալսարան (XIII դար)

2. Տաթևի համալսարան (XIV–XV դարեր):

Միջնադարյան Հայաստանի վանական համալսարանները ոչ միայն ձևավորեցին ազգային ու հոգևոր վերնախավ, այլև ստեղծեցին այն հոգևոր-մշակութային ենթահողը, որի վրա հետագա դարերում շարունակում էր զարգանալ հայ կրթական ավանդույթը՝ անգամ օտար տիրապետությունների ու քաղաքական ցնցումների պայմաններում: Չնայած հետագա դարերում՝ հատկապես օսմանյան և պարսկական տիրապետությունների ժամանակաշրջանում, բարձրագույն կրթությունը թուլացավ, Հայ Առաքելական Եկեղեցին շարունակում էր իր կրթադաստիարակչական առաքելությունը՝ առաջին հերթին վանական դպրոցների, թաղային հոգևոր կրթօջախների, ծխական դպրոցների միջոցով՝ հոգալով ոչ միայն տղաների, այլև աղջիկների կրթությունը:

Սկսած 18–19-րդ դարերից՝ Եկեղեցու հովանու ներքո հիմնադրվում էին աղջիկների համար նախատեսված դպրոցներ, ինչպես՝ Կոստանդնուպոլսի «Հռիփսիմյան օրիորդաց վարժարանը» (1850-ականներ), Զմյուռնիայի «Սրբուհի Մարիամյան դպրոցը», Թիֆլիսի «Սուրբ Նշան օրիորդաց վարժարանը», Վասպուրականի, Ալեքսանդրապոլի ու Երևանի մի շարք ծխական օրիորդաց դպրոցներ: Նմանատիպ դպրոցներ գործել են նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո՝ հատկապես 19-րդ դարի վերջից սկսած: Այսօր նույպես, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառի առաջնորդությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը քրիստոնեական կրթության զարգացման համակարգում ուշադրություն է դարձնում կանանց ու աղջիկների հոգևոր և բարոյական դաստիարակությանը: Այդ ծրագրերը, հիմնված լինելով ավանդական արժեհամակարգի վրա, միտված են ի հայտ բերելու կնոջ՝ որպես ընտանիքի, համայնքի և ազգի ինքնության կրողի առանցքային դերը: Հայ Եկեղեցու պատմական առաքելությունն այս ոլորտում ստանում է արդիական բովանդակություն՝ պահպանելով ավանդույթը, միաժամանակ արձագանքելով ժամանակի պահանջներին:

Այսպիսով՝ Հայ Առաքելական Եկեղեցին պատմության ընթացքում ոչ միայն պահպանում էր կրթության ու մշակույթի շարունակականությունը, այլև ընդլայնում էր իր հոգևոր ազդեցությունը՝ ընդգրկելով նաև այնպիսի դաշտեր, որոնք երկար ժամանակ գտնվել էին լուսավորչության սահմաններից դուրս: Այս հետևողական գործունեությունը հատկապես նշանակալի էր այն պայմաններում, երբ հայ ժողովուրդը կանգնած էր ճակատագրական փորձությունների ու ողբերգությունների առաջ:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո աննախադեպ ճնշումներ գործադրվեցին Հայ Եկեղեցու նկատմամբ: Խորհրդային աթեիստական իշխանությունը նպատակ ուներ լիովին ջնջել կրոնի դերը հասարակական կյանքում՝ արգելելով հոգևոր կրթությունը, փակելով ճեմարանները և քայքայելով վանական կենտրոնների գործունեությունը: Այս քաղաքականության ամենախոր տուժողներից մեկը դարձավ հենց Եկեղեցու հոգևոր դասի պատրաստման գլխավոր կենտրոնը՝ Գևորգյան հոգևոր ճեմարանը, որը բացվել էր դեռևս 1874 թ. և կարճ ժամանակում դարձել հայ հոգևոր-ազգային վերնախավի դարբնոցը: Խորհրդային ճնշումների հետևանքով այն փակվեց, և միայն 1945 թվականին՝ Գևորգ Զ Կաթողիկոսի ջանքերով, հնարավոր եղավ վերաբացել ճեմարանը՝ թեպետ սահմանափակ հնարավորություններով: Վազգեն Ա Վեհափառի առաջնորդության օրոք Մայր Աթոռը, հակառակ տիրող գաղափարախոսական սահմանափակումներին, կարողացավ որոշակի գործունեություն պահպանել կրթադաստիարակչական ոլորտում՝ սերունդների հոգևոր կապը չխզելու վճռականությամբ:



Գևորգյան հոգևոր ճեմարան, 2018—2019 ուս. տարի

Ամենայն Հայոց Կաթողիկոսը պարգևատրում է ԳՀճ բարձր առաջադիմությամբ և կարգապահությամբ սաներին, 2024 թ.

Խորհրդային Միության փլուզումից և Հայաստանի անկախացումից հետո Հայ Եկեղեցու կրթադաստիարակչական առաքելությունը, խորապես արմատավորված հայ ժողովրդի պատմության և մշակույթի մեջ, նոր շարունակություն ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեության մեջ: Հայ Առաքելական Եկեղեցու կրթական գործունեությունը զարգացման նոր աստիճանի հասավ Գարեգին Ա Կաթողիկոսի օրոք (1995–1999) և առավել նշանավորվեց Գարեգին Բ Հայրապետի գահակալության ընթացքում:

Ստորև ներկայացնում ենք Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության տարիներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կրթադաստիարակչական ոլորտում իրականացված կարևոր ծրագրերը, նախաձեռնությունները, նշանակալի ձեռքբերումները:

Գևորգյան հոգևոր ճեմարան

1999 թվականից, Գարեգին Բ Վեհափառի նախաձեռնությամբ, ձեռնարկվեցին համապարփակ բարեփոխումներ՝ կապված Գևորգյան հոգևոր ճեմարանի կանոնակարգի, դասավանդման մեթոդների և ուսումնական համակարգի արդիականացման հետ: 2002 թ. ճեմարանը ձեռք բերեց պետական բարձրագույն ուսումնական հաստատության՝ աստվածաբանական համալսարանի կարգավիճակ, իսկ 2004–2007 թթ. նրան շնորհվեց բակալավրի և մագիստրոսի՝ կրթության երկաստիճան համակարգի ծրագրեր իրականացնելու իրավունք: Գարեգին Բ-ի հետևողական պահանջների ու ջանքերի արդյունքում 2016 թ. ՀՀ ԿԳՆ-ի կողմից Գևորգյան հոգևոր ճեմարանն ստացավ նաև ասպիրանտուրա բացելու իրավունք. Հայաստանի Հանրապետությունում ճեմարանն այսօր միակ բուհն է, որ կարող է շնորհել աստվածաբանության թեկնածուի գիտական աստիճան:

Գևորգյան հոգևոր ճեմարանի գլխավոր առաքելությունն է պատրաստել նվիրյալ և իրենց առաքելությանը գիտակից Հայ Եկեղեցու հոգևորականների: Ճեմարանում ներդրված մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ծրագրերը ապահովում են գիտաուսումնական բարձր մակարդակ:

Գևորգյան հոգևոր ճեմարանի առաքելության մեջ Նորին Սրբության ունեցած ներդրումը ճեմարանի տեսուչ Հոգեշնորհ Տ. Շահե ծայրագույն վարդապետ Անանյանը, 2024–2025 ուսումնական տարվա ավարտական հանդիսության ընթացքում այսպես է բնութագրել. «Հայոց Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հիմնադրված ու այդ կենսավետ ավիշից սնվող այս հաստատության պատմությունն այլևս չափվելու է դարերով.... Գևորգյան ճեմարանի հիմնադիր Գևորգ Դ Մեծագործից մինչև ազգիս Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ Շինարար հայրապետների խնամող շնչով ու հեռահայաց տեսիլքով է կերտվել և կերտվում դարավոր այս ավանդույթը, նրանց հայրական շունչն է, որ հաստատուն է պահում մեր բոլորիս սիրելի Գևորգյան ճեմարանը: Նրա սրբազան կամարների տակ հասակ առած մեծերն են հյուսել ճեմարանական կրթության պսակը, որն այսօր մեր վտիտ ճակատներին ենք կրում՝ որպես ճեմարանավարտ հոգևորականներ»:

Վազգենյան հոգևոր դպրանոց

Դպրանոցը հիմանդրվեց 1990-ական թվականներին՝ Գարեգին Բ-ի նախաձեռնությամբ, երբ դեռևս Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ էր, և երանաշնորհ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ: Անվանակոչվեց Վազգենյան դպրանոց՝ ի պատիվ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Դպրանոցը Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի հատուկ ուշադրության կենտրոնում է եղել միշտ. նա ջանք չի խնայել աջակցելու կրթադաստիարկչական գործի զարգացմանը: 2003–2004 թվականներից սկսյալ՝ Վազգենյան հոգևոր դպրանոցում բակալավրի քառամյա ուսումնական ծրագիրն ավարտելուց հետո ուսանողները մագիստրոսական երկամյա կրթությունը շարունակում են Գևորգյան հոգևոր ճեմարանում:

Թրբանճյան ընծայարանի հիմնանորոգված շենքի նորամուտի արարողությունը, 2017 թ.

Հառիճավանքի Թրբանճյան ընծայարան

Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ-ի ջանքերով և Թրբանճյան ընտանիքի օժանդակությամբ 2011 թ. Հառիճավանքում վերաբացվեց հոգևոր ընծայարան՝ Գևորգյան հոգևոր ճեմարանին կից: 2013 թ. ապրիլին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից Հառիճավանքի ընծայարանին տրամադրվեց ավագ դպրոցի կրթական ծրագրեր իրականացնելու արտոնագիր:

Ընծայարանը գործում է Կրթության և գիտության նախարարության հաստատած ուսումնական և կրթական ծրագրերով, ավարտական քննությունները կազմակերպվում են ավագ դպրոցի կրթական ծրագրերին համապատասխան՝ նախարարության հետ համատեղ: Ընծայարանում, հանրապետության ավագ դպրոցներում իրականացվող ուսումնական-կրթական ծրագրերից բացի, դասավանդում են նաև հոգևոր առարկաներ:

Կալկաթաթայի հայոց մարդասիրական ճեմարան

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կրթադաստիարակչական կենտրոններից է նաև Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանը, որի վերակազմավորումն ու վերագործարկումը ևս տեղի ունեցավ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ջանքերով: Ճեմարանը, պատմական արմատներ ունեցող կրթօջախ լինելով, իր երկրորդ շնչառությունն ստացավ Վեհափառ Հայրապետի հովվապետության տարիներին: Ճեմարանը դարձավ նաև հոգևոր ու ազգային ինքնության

Գարեգին Բ Հայրապետի գահակալության տարիներին

Էօրնեկեան հանրակրթական դպրոցի նոր մասնաշենքի բացումը, 2017 թ.

պահպանման կենտրոն, որտեղ ոչ միայն փոխանցվում են գիտելիքներ, այլև ձևավորվում են արժեքներ: Այսօր Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանը ներկայանում է որպես տարածաշրջանային հենակետ՝ մշակութային երկխոսության, կրթության և հոգևոր կյանքի զորացման տեսանկյունից՝ արտահայտելով Մայր Աթոռի և Վեհափառի ռազմավարական տեսլականը՝ կրթությունը դիտարկելով որպես հոգևոր վերածննդի, ազգային միասնականության և մարդակենտրոն դաստիարակության հիմք:

Էօրնեկեան հանրակրթական դպրոց

Գարեգին Բ-ի նախաձեռնությամբ 2009 թ. հիմնադրվեց նաև Էօրնեկեան դպրոցը՝ արգենտինահայ գործարար Էդուարդո Էօրնեկեանի հովանավորությամբ: Էօրնեկեան դպրոցը եռաստիճան է, կրթությունն իրականացվում է պետական ծրագրով և անվճար է: Դպրոցում գործում են վեց առարկայական մասնախմբեր՝ հայոց լեզվի և գրականության, պատմության, բնագիտամաթեմատիկական, օտար լեզուների, տարրական դասարանների, ֆիզիկական և հոգևոր զարգացվածության:

Քրիստոնեական դաստիարակության կենտրոն

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության օրոք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից քրիստոնեական դաստիարակության ոլորտում ևս իրականացվել են մի շարք բովանդակային նախաձեռնություններ: Վեհափառ Հոր գործունեության առաջնահերթություններից են եղել հայ ժողովրդի քրիստոնեական դաստիարակության վերածնունդն ու նոր դարաշրջանի հոգևոր կրթության զարգացումը:

Այստեղ հարկ ենք համարում հատուկ անդրադարձ կատարել «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի ներդրմանը հանրակրթական դպրոցական ծրագրում:

Մայր Աթոռը՝ Վեհափառ Հոր գլխավորությամբ, մեծապես ներգրավված է եղել Հայաստանի դպրոցներում «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի ներդրման գործում, որպեսզի մեր երեխաները խորապես ճանաչեն մեր պատմությունը, որ սերտորեն առնչված է Հայ Եկեղեցու պատմությանը: 2002 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀՀ կառավարության միջև կնքվեց համաձայնագիր՝ ՀՀ հանրակրթական դպրոցներում «Հայ Եկեղեցու պատմություն» առարկան ներդնելու վերաբերյալ: Համաձայնագիրը ստորագրել են Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը: 2005 թ. Վեհափառ Հայրապետի և ՀՀ ԿԳ նախարար Սերգո Երիցյանի միջև կնքված համաձայնագրով կարգավորվել են առարկայի ուղղվածությամբ յուրաքանչյուր կողմին վերապահված աշխատանքները: «Հայ Եկեղեցու պատմությունը» 2005 թվականից ընդգրկվել է հանրակրթական դպրոցների պետական ուսումնական ծրագրի 4—10-րդ, հետագայում՝ 5—11-րդ դասարանների առարկայացանկում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը հսկայական աշխատանք է իրականացրել՝ հատկապես ուսուցիչների պատրաստման ու վերապատրաստման, ինչպես նաև համապատասխան դասագրքերի ստեղծման գործում: Ցավով արձանագրում ենք, որ սույն թվականի սեպտեմբերից «Հայ Եկեղեցու պատմություն» առարկան ամբողջությամբ դուրս է մնացել դպրոցական ուսումնական ծրագրից՝ չնայած առարկայի կենսական անհրաժեշտությանը հայ աշակերտների դաստիարակության գործում: Անդրադառնալով դասընթացի առաքելությանը՝ Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Հոգեշնորհ Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը հստակորեն նշում է. «Այս դասընթացն օգնում է ձևավորել հայրենասեր, հայրենատեր ու աստվածասեր անհատի, որն ունի ամուր ինքնություն՝ պատրաստ ամեն ինչ անելու հայոց պետության զորացման և մեր ազգի բարօրության համար: Անցնող 18 տարիների փորձառությունը ցույց է տալիս, որ առարկայի շնորհիվ դպրոցական պատանին և համալսարանական երիտասարդն ավելի գրագետ են հոգևոր գիտելիքների առումով և քաջատեղյակ՝ Մայր Եկեղեցու առաքելությանը: Նրանք եկեղեցի են այցելում ոչ թե ավանդույթի ուժով, այլ գիտակցաբար:

Բնականաբար,— շարունակում է Հայր Սուրբը,— այս առարկան տարբերվում էր դպրոցում դասավանդվող մյուս առարկաներից: Եթե մյուսների գլխավոր նպատակն առավել որոշակի գիտելիքի փոխանցումն է, ապա ՀԵՊ-ի միջոցով աշակերտի մեջ ձևավորվում են նաև ոգի, կամք, հոգևոր-բարոյական արժեքներ, որոնց շնորհիվ շատ հաճախ լուծվել են միջանձնային խնդիրներ ևս: Շատ կարևոր է նաև, որ ՀՀ ապագա քաղաքացին քաջատեղյակ լինի Հայոց Եկեղեցու հոգեփրկչական և ազգապահպան առաքելությանը, ծանոթանա հոգեմտավոր այն հարուստ ժառանգությանը, որ ստեղծվել է հենց Հայոց Եկեղեցու ծոցում՝ մեր լուսավոր հայրապետների և վարդապետների կողմից: Համաշխարհայնացման, արհեստական բանականության առկայության պայմաններում այսօր առավել, քան երբևէ, կարևոր են ինքնության բարձր գիտակցությունն ու պահպանությունը մեզ նման փոքր ազգերի դեպքում: Եվ այս առարկան ընդհանրական տեսանկյունից փորձել է նաև այս խնդիրը լուծել»:

Նորին Սրբության օրոք քրիստոնեական դաստիարակությունը Մայր Աթոռի գործունեության առանցքում է եղել միշտ: Չնայած քննադատություններին և որոշ հարցերում պետություն-Եկեղեցի հարաբերությունների լարվածությանը՝ Մայր Աթոռը շարունակել է և մինչ օրս շարունակում է իր գործը հետևողականությամբ՝ ընդգծելով հավատքի դերը հայ ժողովրդի կյանքում:

Վեհափառը Հայորդյաց տների սաների հետ, 2020 թ.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայորդյաց տներ

1993 թվականին, Նորին Սրբության (այն օրերին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ) նախաձեռնությամբ և Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ մեծազնիվ Լուիզ Մանուկյան-Սիմոնի աջակցությամբ, Արարատյան Հայրապետական թեմն ստանձնեց Երևանում գործող մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններից երեքի կառավարումը, որոնք վերանվանվեցին Հայորդյաց տներ: Հետագայում այդ թիվը հասավ 8-ի, և այսօր Հայաստանում գործում են 8 հայորդյաց տներ, որոնցից 4-ը՝ քաղաքամայր Երևանում (Նոր Նորք, Արաբկիր, Մալաթիա-Սեբաստիա, Քանաքեռի մանրանկարչության կենտրոն), իսկ մնացյալ 4-ը՝ մարզերում (Վաղարշապատ, Վանաձոր, Աշտարակ, Գյումրի քաղաքներ):

Հայորդյաց տներում երեխաներն ուսանում են կիրառական արվեստ, կերպարվեստ, երգ-երաժշտություն, պար, կրկեսային խաղեր, լրագրություն, ավիամոդելավորում, օտար լեզուներ: Գործում են նաև սպորտային խմբակներ: Այդտեղ շարունակաբար իրագործվում են նորանոր ծրագրեր, կազմավորվում նոր դասարաններ: Հայորդյաց տների խմբերը ժամանակ առ ժամանակ հանդես են գալիս ելույթներով՝ տարբեր առիթներով և տարբեր վայրերում:

Հայ Եկեղեցու Համաշխարհային Երիտասարդական Միավորում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հիմնադրվեց նաև Հայ Եկեղեցու Համաշխարհային Երիտասարդական Միավորումը (ՀԵՀԵՄ), որ դարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կրթադաստիարակչական քաղաքականության կարևոր առանցքներից մեկը: Այն ձևավորվել է որպես համակարգված կառույց՝ ուղղված հայ երիտասարդության հոգևոր, ազգային և համայնքային գիտակցության ձևավորմանը թե հայրենիքում, թե սփյուռքում:

ՀԵՀԵՄ-ի գործունեության շրջանակում կազմակերպվում են համահայկական ուխտագնացություններ, տարածաշրջանային ու միջազգային ֆորումներ, կրթական և սոցիալական ծրագրեր, որոնց նպատակը հոգևոր արժեքների փոխանցումն է երիտասարդ սերնդին՝ համադրելով ավանդական դաստիարակությունն ու ժամանակի պահանջները: Այսօր ՀԵՀԵՄ-ը մի միավոր է, որտեղ երիտասարդ հայը ոչ միայն ճանաչում է իր հոգևոր արմատներն ու ինքնությունը, այլև մասնակցում է նրանց պահպանման ու տարածման գործին:

Գարեգին Բ Հայրապետն իր օրհնությունը բաշխեց ՀԵՀԵՄ-ի կողմից կազմակերպված «Քրիստոնյա ընտանիքը հայ ինքնության խարիսխ» համահայկական ուխտագնացության մասնակիցներին, 2025 թ., 3 հուլիսի

Ամփոփելով՝ վերստին հաստատենք, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության տարիներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը վերաաշխուժացրեց իր պատմական առաքելությունը՝ դառնալով ոչ միայն հոգևոր առաջնորդական կենտրոն, այլև ազգային դաստիարակության կարևոր առանցք: Ստեղծվեցին ու վերաբացվեցին կրթական նոր կենտրոններ, եղածները նվաճեցին զարգացման նոր մակարդակ: Վեհափառի նախաձեռնությամբ ձևավորվեց համակարգված կրթադաստիարակչական ռազմավարություն, որի շրջանակներում քրիստոնեական հավատքը վերագտավ իր տեղը դպրոցում՝ «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի և դասավանդման արդի մեթոդների միջոցով: Հստակեցվեց և խորացվեց Եկեղեցի-դպրոց, Եկեղեցի-բանակ, Եկեղեցի-ընտանիք կապը: Ստեղծվեցին ծրագրեր, որոնք ուղղված էին ոչ միայն երիտասարդությանը, այլև մեծահասակներին՝ համադրելով ավանդույթն ու ժամանակակից կրթության պահանջները: Մեդիա ոլորտում Եկեղեցու ներկայության ընդլայնումը, հոգևորականների ներգրավումը հանրային կյանքում և ազգային արժեքների խթանումը վերածվեցին կրթական ու ազգային քաղաքականության կարևոր բաղադրիչների:

Այսպիսով՝ Գարեգին Բ Վեհափառի օրոք Մայր Աթոռի կրթադաստիարակչական առաքելությունը ոչ միայն շարունակվեց, այլև զարգացավ ժամանակի մարտահրավերներին համապատասխան՝ հավատքը վերածելով գիտակցված ընտրության, կրթությունը՝ հոգևոր արժեքների փոխանցման հարթակի, իսկ Եկեղեցին՝ ինքնության պահպանման ամուր հիմնասյան:

Ամեն հայի սրտից բխած,
Լսիր այս ձայն, ով Աստված.
Երկար կյանք տուր Հայրապետին,
Երկար օրեր Հայոց Հոր.
Տեր, անսասան պահիր դու միշտ
Քո իսկ հիմնած Մայր Աթոռ...

Վարանդ ՔՈՐԹՄՈՍՅԱՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի արտասահմանյան այցերի և միջազգային գործունեության դերն ու նշանակությունը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի արտասահմանյան այցելությունները և հանդիպումները վերջին երկու տասնամյակներում ձևավորել են դիվանագիտական ու հոգևոր մի հզոր հարթակ, որտեղ համադրվել են եկեղեցական ծառայությունը, պետական ու միջեկեղեցական հարաբերությունների խորացումը, ինչպես նաև սփյուռքի հետ կապերի ամրապնդումն ու համայնքային ներդրումների ապահովումը: 1999 թ. իր գահակալությունից ի վեր Վեհափառ Հայրապետը ձեռնամուխ եղավ հովվապետական և դիվանագիտական համընդգրկուն և լայնածավալ գործունեության՝ միայն 1999–2017 թվականներին կատարելով շուրջ *հինգ հարյուր հիսուն* այց: Այդ այցելություններն ընդգրկում էին թե՛ Հայաստանի տարբեր մարզեր ու Արցախ, թե՛ տարբեր տարածաշրջաններ ու երկրներ և սփյուռքի թեմեր՝ ապահովելով Հայ Եկեղեցու ներկայությունը համազգային ու միջազգային կյանքում՝ իբրև հոգևոր առաջնորդության և ազգային ինքնության պահպանման հաստատուն կառույցի:

Նորին Սրբության արտասահմանյան այցերը կարևոր են նաև իրենց բովանդակությամբ. դրանք միայն պաշտոնական հանդիպումներ ու արարողություններ չեն, այլև հայ ժողովրդի միջազգային ներկայացվածության դրսևորումներ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Գարեգին Երկրորդ Վեհափառի գահակալության տարիներին նաև հյուրընկալել է բազմաթիվ պետությունների և միջազգային կառույցների ղեկավարների: Այսպես, 2020 թվականին Վեհափառ Հայրապետը պաշտոնապես ընդունեց Հորդանանի թագավոր Աբդալլահ II-ին, որի հետ քննարկվեցին Մերձավոր Արևելքի խաղաղության և քրիստոնյա համայնքների պաշտպանության հարցերը: Այս այցը դարձավ այն բացառիկ պահերից մեկը, երբ Էջմիածինը ներկայացավ որպես տարածաշրջանային համակեցության և հանդուրժողականության խորհրդանիշ: Նմանատիպ կարևորություն ուներ նաև Հռոմի Պապ Ֆրանցիսկոսի՝ 2016 թվականի այցը Հայաստան, որի ընթացքում Էջմիածնում Վեհափառ Հայրապետի հետ ստորագրվեց համատեղ հռչակագիր: Այն ամրագրեց երկու եկեղեցիների մերձեցման ու համագործակցության սկզբունքներն ու ուղենիշերը՝ խաղաղության, արդարության և մարդու իրավունքների վկայության համատեքստում: Միջեկեղեցական այս կարևոր փաստաթուղթը հետագա տարիներին բազմիցս արժևորվել է՝ իբրև հայ-կաթոլիկ եկեղեցական հարաբերությունների հիմնաքար:

Կաթողիկոսի միջազգային գործունեության առանցքային դրվագներից են նաև Մոսկվայում կայացած եռակողմ ձևաչափով հանդիպումները Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլի և Կովկասի մուսուլմանների առաջնորդ Շեյխ-ուլ-Իսլամ Փաշազադեի հետ: Այդ հանդիպումները թեև միշտ չեն ունեցել անմիջական արդյունքներ, սակայն կարևոր էին իրենց հոգևոր և քաղաքական արժեկշռով՝ նպաստելով տարածաշրջանային կայունության և կրոնական համակեցության մթնոլորտի ամրապնդմանը: Միջեկեղեցական և միջկրոնական երկխոսությունը, որին հետևողականորեն մասնակցում է Վեհափառ Հայրապետը, ձևավորում է վստահության ու համագործակցության կամուրջներ տարբեր կրոնական համայնքների միջև:

Պաղեստինի նախագահ Յասեր Արաֆաթը «Բեթղեհեմ 2000» շքանշանով պարգևատրեց Գարեգին Երկրորդ Վեհափառին, 2000 թ., 18 հունվարի

Գարեգին Բ Կաթողիկոսը Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ի և ՌԴ նախագահ Վ. Պուտինի հետ, Մոսկվա, 2000 թ., 1 մարտի

Հորդանանի թագավոր Ն. Վ. Աբդալլահ Բին Հուսեյնը Գարեգին Բ Հայրապետին շնորհում է Հորդանանի բարձրագույն՝ Ա կարգի շքանշան, 2000 թ., 16 հունվարի

Գարեգին Երկրորդ Վեհափառի և Իրաքի Հանրապետության նախագահ Աբդալ Լատիֆ Ջամալ Ռաշիդի հանդիպումը, Ս. Էջմիածին, 2023 թ., 22 նոյեմբերի

Գարեգին Բ Վեհափառի և Վրաստանի նախագահ Միխեիլ Կավելաշվիլիի հանդիպումը, Ս. Էջմիածին, 2025 թ., 29 ապրիլի

Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, 2025 թ., 1 ապրիլի

Գարեգին Երկրորդ Կաթողիկոսի՝ արտերկիր այցելությունները նույնքան կարևոր են սփյուռքի հետ կապերի ամրապնդման առումով: Վեհափառ Հայրապետի հովվապետական բազմաթիվ շրջագայություններ Եվրոպայի, Մերձավոր Արևելքի, Հնդկաստանի, ԱՄՆ-ի և աշխարհի այլ հայաշատ կենտրոններ ծառայել են ոչ միայն սփյուռքի համայնքային կյանքին մասնակից դառնալու, այլև այնտեղ կրթական, մշակութային ու շինարարական ծրագրեր մեկնարկելու գործին: Սփյուռքի բարերարները հաճախ պարգևատրվել են Մայր Աթոռի բարձրագույն շքանշաններով՝ ի նշան երախտագիտության: Նրանց ներդրումները հնարավորություն են ընձեռել իրականացնելու եկեղեցիների և կրթամշակութային ու հոգևոր հաստատությունների հիմնարկեքներ, կառուցումներ և օծումներ թե՛ հայրենիքում, թե՛ արտերկրում, որոնք ամրապնդել են Եկեղեցու ներկայությունն ամենուր:

Գարեգին Երկրորդ Կաթողիկոսի գործունեության կարևոր ուղղություններից են նաև միջազգային ֆորումներն ու գագաթնաժողովները: Նա բազմիցս հանդես է եկել բերությունների ու ժողովուրդների միջև բարեկամության կարևոր միջնորդի առաքելությունն:

ելույթներով տարբեր երկրների մայրաքաղաքներում և միջազգային կազմակերպությունների հարթակներում՝ ընդգծելով խաղաղության, Հայոց ցեղասպանության դատապարտման, Արցախյան հիմնախնդրի և պատմական արդարության վերականգնման, Արցախի մեր հայրենակիցների՝ իրենց բնօրրանում ապրելու անբեկանելի իրավունքի, ինչպես նաև կրոնական ազատությունների ու մարդու իրավունքների հարցերը: Վեհափառի ելույթները միջազգային հանրության ուշադրության կենտրոն են բերել ոչ միայն Հայոց Առաքելական Եկեղեցու հարցերը, այլև հայ ժողովրդի արդար պայքարն ու տարածաշրջանի անվտանգային խնդիրները:

Այս ամենը վկայում է, որ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջազգային այցելություններն ու հանդիպումները պետք է դիտարկել ոչ միայն որպես եկեղեցական առաքելության բաղկացուցիչ, այլև որպես դիվանագիտական լայնածավալ գործունեություն: Նրա այցելությունները ծառայել են որպես «փափուկ ուժ»՝ միջազգային ասպարեզում ամրապնդելով Հայաստանի բարենպաստ կերպարը և ստեղծելով նոր հնարավորություններ հայ ժողովրդի համար: Սփյուռքի հետ հարաբերությունները դարձան կամուրջներ, որոնց միջոցով ձևավորվեց ներդրումային ու կրթամշակութային միջավայր: Իսկ պետական և կրոնական առաջնորդների հետ հանդիպումները վերածվեցին միջազգային բարեկամության և խաղաղության նոր ուղիներ բացող միջոցառումների: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դռները միշտ բաց են եղել միջազգային պատվիրակությունների առաջ, և այն դարձել է ոչ միայն հայության հոգևոր կենտրոն, այլև համաշխարհային քրիստոնեական ու միջկրոնական երկխոսության կարևոր հարթակ:

Այսպիսով՝ Վեհափառ Հայրապետի այցերը և միջազգային գործունեությունն ընդգծում են Հայ Առաքելական Եկեղեցու համամարդկային առաքելությունը՝ միավորելու, հաշտեցնելու և համախմբելու տարբեր ժողովուրդների ու համայնքների: Այդ այցերը փաստում են նաև, որ հայոց հոգևոր առաջնորդությունը կարող է դառնալ ոչ միայն հավատքի և ինքնության պահպանման խորհրդանիշ, այլև միջպետական և միջեկեղեցական հարաբերություններ կայունացնող ու զարգացնող ուժ:

Արարատ քահանա ՊՈՂՈՍՅԱՆ

Հայոց բանակ-Եկեղեցի կապը՝ Գարեգին Երկրորդ Վեհափառի գործունեության զարկերակ

↩ էջ 3

Հայրենյաց պաշտպանների հետ զրույցում Վեհափառ Հայրապետը մասնավորապես նշեց, որ հայ զինվորը մշտապես իր աղոթքներում է: Անդրադառնալով բանակ-Եկեղեցի կապին՝ Հայոց Հայրապետն ընդգծեց. «Տարակույս չունենք, ինչպես անցյալում, այնպես և այսօր ու ապագայում հայ հոգևորականը լինելու է հայ զինվորի կողքին, լինելու է առաջնագծում»: Սահմանապահ զինվորականներին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հրավիրեց ծառայության ավարտին այցելելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և հյուրընկալվելու Հայոց Հայրապետին:

2020 թ. 31 դեկտեմբերի

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոնի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց «Իզմիրլյան» բժշկական կենտրոնում բուժում ստացող վիրավոր զինվորականներին: Կենտրոնի տնօրեն պրոֆեսոր Արմեն Չարչյանի ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետն այցելեց բոլոր հիվանդասենյակները՝ իր աղոթքը կատարելով հայրենիքի պաշտպանության սրբազան առաքելության ընթացքում վիրավորված քաջորդիների համար և հետաքրքրվելով նրանց ապաքինման ընթացքով ու առկա կարիքներով:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի ուղեկցությամբ այցելեց Հայաստանի հարավային ուղղությամբ տեղակայված N զորամասի մարտական դիրքեր:

Հայոց Հայրապետն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց սահմանապահ զինվորականներին՝ մեծապես արժևորելով հայ զինվորի ու հրամանատարի անձնվեր ու անմնացորդ ծառայությունը հայրենիքին: Ջերմ զրույցի ընթացքում Վեհափառն ընդգծեց, որ Հայոց բանակը եղել և մնում է հիմնական երաշխավորը անկախ պետականության պահպանության և հայրենաբնակ մեր ժողովրդի պաշտպանության:

Նորին Սրբությունը հաստատեց, որ Արցախյան պատերազմում հայրենյաց պաշտպանների դրսևորած արի ոգին, նախանձախնդրությունը, անձնազոհ և եղբայրասեր կերպարը միայն հպարտության զգացումով են լցնում իր հոգին: Վեհափառը նաև աղոթքով հիշեց նրանց ծառայակից նահատակ եղբայրներին և այլևս պատմության մեջ արձանագրված նրանց սխրանքները, որոնք ուժ պիտի տան համայն մեր ժողովրդին՝ կերտելու հայրենիքի նոր, լուսավոր օրը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, սրբապատկերներ ընծայելով զինվորներին, անփորձանք և ապահով ծառայություն մաղթեց ամենքին՝ նշելով, որ մեր զինականները մշտապես Հայոց Հայրապետի և հայ եկեղեցականների աղոթքներում են:

2021 թ., 6 հուլիսի

Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Արցախի պաշտպանության բանակի N զորամաս: Կաթողիկոսը հարգանքի տուրք մատուցեց Արցախի համար զոհված տղաների հիշատակին:

Իր խոսքում Գարեգին Երկրորդն ասաց. «Դժվարին ժամանակներ է ապրում համայն հայությունը: Արցախի դեմ Թուրքիայի և միջազգային ահաբեկչական խմբավորումների օժանդակությամբ՝ Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմն իր հետևանքներով, պատճառած վնասներով ու ահռելի կորուստներով դեռ երկար ժամանակ ցավի ու տրտմության մեջ պիտի պահի մեզ, քանի դեռ չենք կարողացել գործուն միջոցներով հաղթահարել առկա ծանր իրավիճակը և փարատել ապագայի հանդեպ անորոշության զգացումը: Առկա խնդիրներն ու մարտահրավերները մեր կյանքի իրենց լուծումները պիտի ստանան, երբ անխտիր ամենքս հետևություններ կատարենք ողբերգական այս կացության պատճառների վերաբերյալ»:

Վեհափառի խոսքով՝ հայ զորականի թիկունքում ամենաթանկն են՝ հայրենի հողը, հայի ինքնությունը պայմանավորող սրբությունները և ընտանիքը. «Հայոց բանակը և հայ զինվորն է այսօր միակ երաշխավորը հայրենի պետականության, մեր ժողովրդի ազատ ու անկախ կյանքի, ձեր ընտանիքների ու սիրելիների անվտանգության ու երջանկության, ամեն ազգայինի հարատևության»:

Գարեգին Երկրորդը հիշեցրեց, որ եկեղեցին մշտապես զորավիգ է եղել և այսուհետ ևս պիտի զորավիգ լինի հայոց բանակին: Կաթողիկոսը «Պահպանիչ» աղոթքով օրհնեց ՊԲ հրամանատարներին և ներկա զինվորականներին:

2021 թ., 21 օգոստոսի

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վիեննայում հանդիպում ունեցավ Արցախյան վերջին պատերազմի ժամանակ ծանր վիրավորում ստացած զինվորների և նրանց ընտանիքների անդամների հետ, որոնք ս. թ. ապրիլից Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությամբ և Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակության հրավերով իրենց բուժումն են ստանում Ավստրիայի Կաթոլիկ Եկեղեցու հովանու ներքո գործող բարձրակարգ բժշկական հաստատություններում:

Վեհափառը հայրական իր օրհնությունը բերեց քաջարի զինվորներին և նրանց ընտանիքներին, ծանոթացավ վերջիններիս բուժման և պրոթեզավորման ընթացքին: Հայոց Հայրապետը գոհունակությամբ տեղեկացավ, որ ծանր վիրավորում ստացած զինվորներից երկուսը բարեհաջող վիրահատություններից, վերջույթների պրոթեզավորումից և վերականգնողական թերապիայից հետո արդեն վերադարձել են Հայաստան:

Հանդիպման ժամանակ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթք բարձրացրեց մեր բոլոր վիրավոր զինվորների համար՝ մաղթելով նրանց շուտափույթ ապաքինում, ոգու ամրություն և Աստուծո օգնականություն:

Զորամասեր և հոսպիտալներ հայրապետական այցերից զատ՝ պարբերական բնույթ են կրում Վեհափառի և ՀՀ ԶՈՒ բարձրագույն սպայական կազմի ներկայացուցիչների հանդիպումները Վեհարանում: Գարեգին Երկրորդ Հայրապետի գահակալության ընթացքում մկրտվել են հազարավոր զինծառայողներ, զորամասերում և մարտական դիրքերում կառուցվել են եկեղեցիներ, մատուռներ, պատերազմի զոհերի հուշակոթողներ ու խաչքարեր: ՀՀ Զինված ուժերում կատարվել են բազմաթիվ եկեղեցական և պետական տոնական միջոցառումներ ու արարողություններ, զորամասերն ապահովվել են հոգևոր գրականությամբ: Տեղի են ունեցել Արցախյան 44-օրյա պատերազմին մասնակից եկեղեցականների պարգևաբաշխություն, ՀՀ Զինված ուժերի բարձրաստիճան սպաների պարգևատրումներ՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու բարձրագույն՝ հայրապետական «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշանով, կազմակերպվել ՀՀ զինված ուժերի տարբեր զորամասերի զինվորների և սպայակազմի այցելություններ Մայր Աթոռի թանգարաններ: Այդ տարիներին՝ պատերազմներից հետո, կազմակերպվել են մի շարք բարեգործական ծրագրեր՝ հաջակցություն զինծառայողների, զոհվածների ու վիրավորների ընտանիքների:

Անհնար է մեկ հոդվածի սահմանում բոլորն ընդգրկելը կամ բոլորին անդրադառնալը. դրանք բազմաթիվ են ու բազմազան և կարող են դառնալ ստվարածավալ աշխատության նյութ հետագա հետազոտողների համար: Ուստի հիշատակենք բնութագրական ևս մի քանիսը:

Առանձնահատուկ արարողություններից են 2016 թվականին՝ Ս. Ծննդյան և Աստվածահայտնության տոնին հաջորդող օրերին, Մայր Աթոռի ջրօրհնյաց Խաչը Հայաստանի և Արցախի զորամասեր տանելն ու այդ խաչով ողջ սահմաններն օրհնելը, ինչպես և հայոց բանակի պահապան Աշոտ Երկաթի Ս. Խաչը սահմանային զորամասեր տանելն ու մարտական դիրքերում օրհնության կարգ կատարելը:

2021 թ., հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի, Ս. Գայանե վանքում կատարվել է Հանրապետական մաղթանք՝ հայրենիքի խաղաղության և ապահովության համար:

2020 թվականին՝ 44-օրյա պատերազմի ընթացքում, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը դիմել է պետությունների ղեկավարների, միջեկեղեցական ու միջկրոնական կառույցների առաջնորդների՝ ցեղասպանական պատերազմի դադարեցման, Արցախի հոգևոր ու պատմամշակութային ժառանգության պահպանման համար՝ աշխարհի քրիստոնեական Եկեղեցիների պետերի ուշադրությունը հրավիրելով Արցախում տեղի ունեցողի վրա: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաև դիմում է ներկայացրել Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա-ին և ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին՝ Դադիվանքի պահպանության համար: Արդյունքում ՌԴ իշխանությունները դիտակետ են տեղակայել Դադիվանքի հարևանությամբ՝ հնարավորություն ընձեռելով հայ հոգևորականներին շարունակելու իրենց սպասավորությունը, իսկ հավատացյալներին՝ մասնակցելու կիրակնօրյա պատարագներին:

Այսպիսով՝ Հայոց բանակն ու հայրենիքի անվտանգությունը Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական գործունեության առանցքում են եղել մշտապես, և այսօր ու միշտ կլինի այդպես:

Հերմինե ՍԱՀԱԿՅԱՆ

Ամարաս, 2021 թ., 5 հունիսի

Արցախ, 2016 թ., 6 սեպտեմբերի

Վեհափառը Եռաբլուրում, 2023 թ., 28 հունվարի

Երբ հավատքը գործ է դառնում...

↩ էջ 5

Այդ ծրագրերն էապես նպաստել են Հայաստանի, Արցախի և սփյուռքի հայ համայնքների բարօրությանը, դրանցից օգտվել են հազարավոր մարդիկ:

Օրինակ՝ 2014 թ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ ստեղծված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սոցիալական ծառայության գրասենյակը, որ մշակում և իրագործում է սոցիալական աջակցության և զարգացման ծրագրեր, նախընթաց՝ 2024 թվականին, իրականացրել է դրամական, իրային և բժշկական աջակցության մի շարք սոցիալական ծրագրեր՝ ընդհանուր առմամբ՝ 1 551 115 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի (608 037 073 ՀՀ դրամ) օժանդակություն՝ մասնավորապես 2023 թ. Արցախից տեղահանված և առնվազն 4 անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքներին, Վաղարշապատի վանքապատկան շենքերից մեկում ժամանակավորապես բնակություն հաստատած արցախցի 16 ընտանիքների, զոհված զինծառայողների, ինչպես նաև բազմազավակ և կարիքավոր ընտանիքների: Հայաստանյան տարբեր թեմերի միջոցով իրային աջակցություն է տրամադրվել 614 ընտանիքների (շուրջ 3000 անձ):

Գարեգին Բ Կաթողիկոսի հայրապետական այցը Էջմիածնի ԲԿ-ի ծննդատուն, 2024 թ., 31 դեկտեմբերի

Նույն թվականին Մայր Աթոռի հովանու ներքո գործող Իզմիրլյան ԲԿ-ն իրականացրել է կարիքավորների բժշկական աջակցության 4 ծրագիր, որի ընթացքում օգնություն է ցուցաբերվել 44-օրյա պատերազմի մասնակիցների, Սիրիայից փախստականների, «Զինվորի տուն» բարեգործական-հասարակական կազմակերպության պատերազմի հաշմանդամների և Արցախից բռնի տեղահանվածների, ընդհանուր՝ 132 անձի:

2020 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվել են ավելի քան 2 մլրդ 118 մլն ՀՀ դրամի բարեգործական ծրագրեր: Սոցիալական ծրագրերը հիմնականում ուղղված են եղել 44-օրյա պատերազմի հետևանքով ստեղծված աղետալի իրավիճակի և թագավարակի հետևանքների մեղմացմանը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացված և շարունակվող սոցիալական ծրագրերն ու դրանց ֆինանսական ծախսը հաշվետվողական են, հանրությանը հասանելի: Դրանք յուրաքանչյուր տարի ներկայացվում են Գերագույն Հոգևոր Խորհրդի հաստատմանը, ապա հրատարակվում «Էջմիածին» պաշտոնական ամսագրում:

Բարեսիրական ծրագրեր Նորին Սրբությունը նախաձեռնում և իրագործում էր դեռևս մինչև Ամենայն Հայոց Կաթողիկոս օծվելը: Այսպես, տակավին Արարատյան Հարապետական թեմի առաջնորդական փոխանորդության տարիներին Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի կողմից Հայաստանում հիմնադրվեցին բարեգործական ճաշարաններ, որոնց թիվը նրա հայրապետական գահակալության առաջին տարիներին հասավ 5-ի՝ մեկական՝ Էջմիածնում և Վանաձորում, երեքը՝ Երևանում: Մինչև օրս այդ բարեգործական ճաշարաններում հանապազօրյա սնունդ են ստանում հարյուրավոր մարդիկ:

Կրթական ուղղվածությամբ հարկ է առանձնացնել Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ ու տնօրինությամբ ստեղծված և մինչ օրս գործող «Նագաշյան մանուկների տուն» (2012) և «Քյուրքչյան» (2018) երեխաների աջակցության կենտրոնները: Նագաշյան կենտրոնն աջակցում է առանց ծնողական խնամքի մնացած աղջիկների՝ ապահովելով շուրջօրյա խնամք, կեցավայր, հոգալով նրանց սոցիալական ու կրթա-դաստիարակչական խնդիրները: «Քյուրքչյան» կենտրոնը գիշերօթիկ կենտրոն է ծնողազուրկ կամ անապահով ընտանիքների տղա երեխաների համար. խնամքի տակ առնելով նրանց՝ կենտրոնն իրականացնում է խնամք ու դաստիարակություն, կազմակերպում նրանց կրթությունն ու զարգացումը մինչև չափահաս դառնալը:

Միայն վերջին տասնամյակում՝ 2014—2024 թթ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սոցիալական բաժնի լայնածավալ ծրագրերի իրականացման համար ծախսվել է շուրջ *8 600 000 000 (ութ միլիարդ վեց հարյուր միլիոն)* ՀՀ դրամ:

Այս թվով և Սոցիալական գրասենյակի գործունեությամբ բնավ չի սահմանափակվում Մայր Աթոռի բարեսիրական գործունեությունը: Հայտնի է, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու տակ գործում են մի շարք կրթական կենտրոններ՝ Գևորգյան հոգևոր ճեմարանը, Վազգենյան հոգևոր դպրանոցը, Թրբանճյան ընծայարանը, Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանը, Էօրնեկյան դպրոցը և այլն, որտեղ ուսուցումն անվճար է, սնունդը, բժշկական օգնությունն ու հանդերձանքը տրամադրվում են:

Ամփոփելով՝ նշենք, որ Գարեգին Բ Կաթողիկոսի շուրջ քառորդդարյա գահակալության շրջանը նշանավորվեց նաև սոցիալական ծառայության ընդլայնմամբ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ իր բուն առաքելությանը հավատարիմ, դարձավ միաժամանակ մարդկային կարիքների արձագանքող և բարօրություն սերմանող ջահակիր ուժ:

Դավիթ սարկավագ ՍԵՐԳԵՅԵՆԿՈ
Հայկ ԾԱՏՈՒՐՅԱՆ

Խոհեր Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի 2024—2025 թթ.

• Պատմական անբեկանելի ճշմարտություն է՝ մարտնչել Սուրբ Էջմիածնի դեմ նշանակում է մարտնչել հայոց ինքնության և գոյության դեմ, հարված հասցնել հայոց պետականությանը և հայ կյանքը պարպել ազգային ու հոգևոր բովանդակությունից:

• Այս բարդ իրավիճակի կարգավորման գործում հիմնական պարտավորությունն ու պատասխանատվությունը մերն են, հարկ է համախմբվել, զերծ պահել հայրենի մեր երկիրը նոր ցնցումներից ու կորուստներից, փարատել ապագայի շուրջ առկա տագնապներն ու մտահոգությունները, վերատեսության ենթարկել սխալ ու ազգավնաս ընթացքները, առավել ամրապնդել Հայաստան-սփյուռք հարաբերությունները, ներքաղաքական կյանքում սկիզբ դնել առողջ երկխոսության և ելքի ուղիներ գտնել հայրենիքում մեր ժողովրդի ապահով ու անվտանգ կյանքի վերականգնման՝ մեզ ուղեկից դարձնելով արդարությունը, խիզախությունն ու ազնվությունը:

• Ով օծված է Սրբալույս Մյուռոնով, չի կարող ուրանալ անկախ հայրենիք ունենալու իր հայրերի երազները, հրաժարվել սեփական պատմությունից: Ով օծված է Մյուռոնով, չի կարող մերժել իր նախնյաց ժառանգությունը, նսեմացնել սրբագործված արժեքները, եղծել իր ազգային դիմագիծն ու իղձերը: Ով օծված է Սրբալույս Մյուռոնով, չի կարող անարգել ու արհամարհել հայրենակից ու բարեկամ իր քույրերին ու եղբայրներին, քանզի ասված է. «Ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսել» (Ա Հովհ. 4.20): Ով օծված է Սրբալույս Մյուռոնով, կոչված է դառնալու ճշմարտության առաջամարտիկ, բարիքի կերտող և սիրո քարոզիչ: Եվ վերջապես, ով օծված է Սրբալույս Մյուռոնով, նա երկյուղած պիտի լինի միայն ու միայն Աստծուց և աներկյուղ՝ թշնամիների ու սպառնալիքների առջև:

• Գիտությունն ու մարդկային հնարավորությունները մեր օրերում արագ են զարգանում, և առավել քան երբևէ, այսօր կարևորվում են ուսումն ու կրթությունը: Բոլոր ժամանակներում, սակայն, գլխավորը մարդկային ոգին ու նկարագիրը կրթելն է, այն ճշմարտության և բարու մեջ հաստատելը:

• Արդարև, գիտելիքը արարելու ուժ ու զորություն է, բայց այն բարիք է դառնում, երբ հաստատված է հոգևոր արժեքների ու բարոյական հիմքերի վրա:

• Պատմությունը պետք է վերանայել սխալները ճանաչելու և ուղղելու նպատակով, իսկ մեր երկրի ու հայրենի պետականության ապահով ներկան և մանավանդ ապագան կարող ենք կերտել՝ առ Աստված մեր հավատին և ավանդներին ու դրանցով ներշաղախված մեր ազգային նկարագրին հարազատ ու հավատարիմ մնալով: Սա է մեր պատմության մատուցած գլխավոր դասը, որը երբեք չպիտի մոռանանք:

• Մեր ժողովուրդը հզոր է իր հերոսական անցյալով, չարի ու չարիքի դեմ պայքարի վճռականությամբ և նույն ոգով պիտի հեռացնի իր կյանքից ազգային շահերին հակառակ կործանարար դրսևորումները, առկա բարդ իրադրությունից ջանքերի մեկտեղումով ելքի ուղիներ գտնի և կերտի իր հաղթական ապագան:

• Հարուցյալ կյանքը, հիրավի, սկսվում է քրիստոսավանդ պատգամներով ապրելու վճռականությամբ, արհավիրքներից ու տառապանքներից դեպի կենսանորոգ ձեռքբերումներ առաջին քայլից: Այս գիտակցությունը, այս ոգին պիտի աննկուն պահենք մեզանում, չընկրկենք մեզ պատուհասած փորձությունների դիմաց, չգործենք պարտվողական հոգեբանությամբ և չվերածվենք վիատված ու տկար ազգի՝ վտանգելով մեր հայրենիքի ապագան և անկախ պետականությունը:

• Մեր ընթացքը չի վերջանում մեր մարտիրոսների ու քաջորդիների նահատակության վայրերում և ոչ էլ Արցախում թողնված շիրիմների մոտ: Չարի կողմից մեզ համար փորված գերեզմանը բոլոր ժամանակներում թափուր է մնալու, քանզի մենք Քրիստոսի հետ նեղությունները հաղթահարող և ամեն գողգոթայից հարության հավատքով հառնող ժողովուրդ ենք:

• Մեր ժողովուրդը 21-րդ դարում վերստին կրեց կորուստներ, ենթարկվեց նոր փորձությունների, որոնք, ցավոք, անկարող եղանք հաղթահարելու աշխարհաքաղաքական բարդ իրադարձությունների, ինչպես նաև առաքելապատվեր բարության, արդարության ու ճշմարտության ճանապարհից խոտորվելու պատճառով: Բարությունը մեզանում աղճատվեց չարության ու նենգության որոմներով, արդարությունն այլափոխվեց կողմնակալության ու հաշվեհարդարի դրսևորումներով, ճշմարտությունը խեղվեց ու խաթարվեց ստով ու չարահնար գործողություններով: Նման արատները նաև պատճառ դարձան մեր ազգի մասնատման, ուժերի ջլատման ու պարտությունների, կորուստների մեր սրբությունների և արժանապատվության: Այսպես Արցախը միայնակ մնաց իրեն պատած արհավիրքների օրերին:



• Աստծո հետ՝ ամեն նեղություն վերափոխվում է հաղթության, ամեն տառապանք՝ աստվածային հատուցման, ամեն դժվարություն՝ ուժի և զորության, և անգամ մահը՝ հավիտենության:

• Մեզ համար երբեք անցյալ չի դառնալու Արցախը, որը մենք շարունակելու ենք փայփայել մեր սրտում ու հոգում՝ ամենայն ջանք ի գործ դնելով արցախահայության իրավունքների պաշտպանության համար:

• Անտարակույս, մեր ժողովրդի հոգևոր ներուժն ու ոգու ամրությունը մեզ պիտի առաջնորդեն վերիհառնումի և հայոց կյանքի հաղթական վերընձյուղման: Մենք ժառանգներն ենք մի ազգի, որ տառապել ու չարչարվել է, բայց չի հանձնվել, ցեղասպանվել է, բայց չի կործանվել, սրատվել է, բայց չի մահացել: Արդարև, չի կարող ընդհատվել պատմությունը մի ժողովրդի, որի տարեգրությունը զարդարված է աստվածապաշտության և հայրենասիրության հրաշալի վկայություններով, ապրելու և արարելու անընդմիջելի տենչանքով:

• Փորձությունները հաճախ են պատահում ժողովուրդների կյանքում, սակայն դժվարին իրավիճակներից հաղթանակած են դուրս գալիս այն ազգերը, որոնք աննկուն են մնում ոգով ու առ Աստված հավատքով և արիաբար դիմակայում նեղություններին ու մարտահրավերներին.

• Հայրենիքը այն միակ սրբազան վայրն է, որտեղ ամբարված են բոլոր ժամանակների հայ սերունդների աղոթքներն ու երազները, որտեղ շարունակ պիտի կերտվի հայոց ինքնությունը, և որի սրբազան հողից է հավետ ուժ առնելու հայ ժողովուրդը:

• Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Աստծո հետ մեր ժողովրդի հավերժական ուխտի խորհրդանիշն է, որ դրոշմված է ամեն հայի հոգում: ➥ էջ 11

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի էկումենիկ և միջկրոնական գործունեությունը

➥ էջ 4

Դիմելով համաժողովի մասնակիցներին՝ Նորին Սրբությունն ընդգծեց. «Արցախի հոգևոր, մշակութային և պատմական ժառանգության պահպանության հարցն ավելի, քան երբևէ, հրատապ է այսօր, երբ Արցախի բռնի տեղահանված ժողովուրդը զրկված է սեփական հողի վրա ապրելու և արարելու, դարերով իր հավատքով կերտած մշակույթը պահպանելու և զարգացնելու իրավունքից: Ժամանակակից աշխարհում չպետք է հանդուրժվեն մարդկության ու մարդկայնության դեմ նման սոսկալի եղեռնագործություններ, ազատության, արդարության ու իրավունքի հիմնասյուները խարխլող արարքներ: Այո՛, ազգերի միջև հակամարտությունները պետք է կարգավորվեն խաղաղ ուղիներով, արդարությամբ ու փոխհամաձայնությամբ, ազգային ինքնության ու արժանապատվության հարգմամբ»:

Գարեգին Բ Կաթողիկոսը «Կրոնական ազատություն. հայկական հոգևոր, մշակութային և պատմական ժառանգության պահպանումը Արցախում/Լեռնային Ղարաբաղում» խորագրով միջազգային համաժողովում ելույթ ունենալիս, 2025 թ., մայիս, Բեռն

2026 թվականին ամենամյա Քրիստոնեական միության աղոթքի շաբաթվա աղոթքի տեքստերը պատրաստվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ օրհնությամբ Վեհափառ Հայրապետի: Այդ առիթով 2024 թ. հոկտեմբերին ԵՀԽ և Վատիկանի միջեկեղեցական խմբագրական հանձնախմբի հետ մեկտեղ Սուրբ Էջմիածնում միասնական խմբագրական աշխատանքներ են տարվել նյութի վրա, որը 2026 թ. հունվարին ողջ քրիստոնյա աշխարհը մեկ շաբաթ ընթերցելու է:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալությունը նշանավորվեց ոչ միայն միջքրիստոնեական կապերի աշխույժ զարգացմամբ, այլև միջկրոնական երկխոսության նպաստմանն ուղղված հետևողական ջանքերով՝ հանուն աշխարհում մարդկության առջև ծառացած հիմնախնդիրների լուծման ու խաղաղության տարածման: Այս պնդման հավաստիությունը հիմնավորում են բազմաթիվ փաստեր և իրողություններ: Դրանցից առաջինը 2000 թ. օգոստոսին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ելույթն է ՄԱԿի հովանավորությամբ կազմակերպված «Հազարամյակի աշխարհի խաղաղության» կրոնապետերի գագաթնաժողովին, որին մասնակցել են աշխարհի կրոնական խճանկարը ներկայացնող շուրջ 3500 հոգևոր գործիչներ: «Չնայած վերջին հարյուրամյակում կատարված համընդհանուր զարգացումներին ու առաջընթացին՝ դարը նշանավորվեց պատերազմներով, կոտորածներով, էթնիկական ու կրոնական հակասություններով և ընդհարումներով, մարդկային համատարած տառապանքներով: Արդյո՞ք այս ամենը չի վկայում միմյանց հասկանալու, ներելու և հաշտվելու մեր անկարողության մասին: Արդյո՞ք այս ամենն այն պատճառով չէ, որ մենք բոլորս շատ հաճախ հանձն չենք առնում պատասխանատվությունը մարդկության վշտերի համար: Արդյո՞ք մեր անհատական և հավաքական պարտականությունը չէ՝ արգելակել բռնությունը, անտարբերությունն ու անհանդուրժողությունը» (Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Հատընտիր պաշտոնականք (1999—2009 թթ.), Ս. Էջմիածին, 2010, էջ 201—202):

Միջկրոնական գործունեության մեջ հատկապես նշանակալից են Վեհափառ Հայրապետի եռակողմ հանդիպումները Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարքների և Ադրբեջանի մուսուլմանների հոգևոր առաջնորդ Շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեի հետ: Նմանատիպ ձևաչափով հանդիպումներ տեղի են ունեցել 2000, 2003 (քառակողմ՝ մասնակցությամբ Վրաց Կաթողիկոս-պատրիարք Իլիա Բ-ի) և 2010 թվականներին: Հատկապես հատկանշական է 2010 թ. Վեհափառի կողմից գլխավորած պատվիրակության այցը Բաքու, որտեղ նա մասնակցեց կրոնապետերի համաշխարհային գագաթնաժողովին՝ նվիրված կրոնների և ավանդական արժեքների վրա համաշխարհայնացման ազդեցության խնդիրներին: Այս բոլոր հանդիպումների ընթացքում Վեհափառ Հայրապետը ջատագովել է ժողովուրդների խաղաղ համագոյակցությունը, փոխընդունելի որոշումների մշակումը և բացառապես բանակցային ճանապարհով խնդիրների լուծումը: Հայոց Հովվապետը մշտապես առաջ է մղել Արցախի ինքնորոշման և սեփական բնօրրանում ազատ ապրելու իրավունքը: Դժբախտաբար, քաղաքական վայրիվերումները բերեցին 2020—2023 թվականների ողբերգական դեպքերին, սակայն Ամենայն Հայոց Կաթողիկոսը Եկեղեցու ո՛չ ներքին, ո՛չ էլ արտաքին գործունեության ոլորտից երբեք դուրս չի թողել Արցախի և Արցախի ժողովրդի հիմնահարցերը: Ընդհակառակը, Վեհափառը շարունակում է հայրական հոգածության ներքո պահել իր բոլոր զավակներին՝ հոգալով նրանց ոչ միայն հոգևոր, այլև նյութական և իրավական խնդիրները:

2022 թ. դեկտեմբերի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, տեղի ունեցավ «Կրոնները ազգերի խաղաղ համագոյակցության երաշխիք» խորագրով գիտաժողովը՝ կազմակերպված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան կապերի և մշակույթի կազմակերպության հետ համատեղ:

Ամփոփելով Նորին Սրբության միջեկեղեցական և միջկրոնական գործունեությունը՝ կարող ենք առանձնացնել հետևյալ երկու բանաձևումները, որ տրվել են Վեհափառ Հայրապետի կողմից և արտահայտում են նրա էկումենիկ ընկալումների առանցքը. «Բոլոր կրոնները փնտրում են խաղաղությունը երկնքի ու երկրի և առաքելություն ունեն փնտրելու խաղաղությունը մարդկանց մեջ» (Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Հատընտիր պաշտոնականք (1999—2009 թ.), էջ 5—15): Վեհափառ Հայրապետն այդ հիման վրա առաջադրում է կայուն, խաղաղ և ներդաշնակ աշխարհակարգ ստեղծելու մանրակերտ, որը նա բնութագրում է որպես մարդկության «կորուսյալ դրախտի» վերականգնում:

Իսկ միջեկեղեցական ասպարեզում Հայ Եկեղեցու դերի մասին այսպես է արտահայտվել Վեհափառը. «Մենք փոքր ազգ ենք, սակայն եկեղեցական հարաբերություններում մեր կեցվածքը բնորոշ է զորավոր եկեղեցիներին և զորավոր ազգերին: Փոքր ազգերին բնորոշ է ամփոփված մնալը՝ պահելու համար իրենց արժեքները, իրենց ավանդությունները.... Մեր կյանքն ու գործունեությունը բնորոշ են մեծ և զորավոր ուժեր ունեցող ազգերին: Այդ ուժը մենք ստանում ենք Տիրոջից, Նրա հանդեպ ունեցած մեր հավատից: Չենք կարող մեր ճանապարհը շարունակել, եթե այն Աստուծո կամքը չլինի» («Էջմիածին», 2007, ԺԱ , 54—55)»:

Այսպիսով՝ Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջեկեղեցական և միջկրոնական գործունեության ողջ ընթացքում կենտրոնական տեղ են զբաղեցրել ոչ միայն հոգևոր-կրոնական թեմաները, այլև Հայոց ցեղասպանության ճանաչման ջանքերը, Արցախի իրավունքների պաշտպանությունը, հայի ու հայկականի պահպանությունը: Նորին Սրբության օրոք եկեղեցին իր արտաքին քաղաքականությունը ևս վարել է ազգայինի ու հոգևորի՝ միմյանց հետ սերտորեն կապված առաջխաղացման ուղով:

Իր հարյուրավոր պաշտոնական հանդիպումներում՝ լինեն դրանք կրոնական թե պետական առաջնորդների, միջազգային դեսպանների կամ հասարակական գործիչների հետ, Վեհափառը բարձրաձայնել է բոլոր այն խնդիրները, որ հուզում են հային ու Հայաստանին: Նորին Սրբության գահակալության օրոք Մայր Աթոռը դարձել է հայության արդար ձայնը համայն աշխարհում, որը լսելի է անգամ աշխարհի այն անկյուններում, ուր երբեք հայության հարցերը չեն բարձրաձայնվել:

Էդվարդ սարկավագ ՔԵՇԻՇՅԱՆ
Սոնա ՔԵՇԻՇՅԱՆ

Խոհեր Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի 2024—2025 թթ.

➥ էջ 10

• Չկա Սուրբ Էջմիածին առանց հայության, և չկա հայություն առանց Սուրբ Էջմիածնի:

• Ատելությամբ ու թշնամանքով բարիք չի ծնվի, բռնաճնշումներով երկիր չի կառուցվի, սպառնալիքի ու վախի մթնոլորտում արդարություն ու համերաշխություն չեն հաստատվի:

• Ժողովուրդը կարող է հաղթանակել, երբ միաբանված է մեկ նպատակով, մեկ ձգտումով ու բաղձանքով:

• Մշակութային ժառանգության նկատմամբ իրականացվող ոճիրները ոչ միայն մեկ ազգի, այլև համամարդկային արժեքների դեմ հանցագործություն են:

• Յուրաքանչյուր հաղթանակ ձեռք է բերվում հավատքով, անդուլ մաքառումով և փորձությունների դիմակայումով:

• Հայոց ցեղասպանության դատապարտումը չպիտի սահմանափակվի սոսկ հուշարձանների մոտ համախմբումով, այլ պիտի գործադրվեն հետևողական քայլեր՝ մեր ժողովրդի հանդեպ արդարությունը վերականգնելու և կանխելու նման ողբերգությունները: Առանց այսօրինակ հանցագործությունների դատապարտման, առանց պատմական արդարության հետ առերեսվելու՝ հնարավոր չէ խաղաղություն հաստատել ազգերի և պետությունների միջև և սերունդներին փոխանցել լուսավոր ապագա:

• Մեր արդար Դատի պահանջատիրությունը չունի իր մեջ ատելություն ու թշնամանք: Պահանջատիրությունը ցուցիչն է ազգային մեր արժանապատվության և հարացույցը՝ մեր սուրբ նահատակների նկատմամբ հարգանքի ու նրանց հիշատակի առջև մեր խոնարհումի: Պահանջատիրությունը մեր պատասխանատվությունն է գալիք սերունդների առջև:

• Մեր նախնյաց ժառանգության նկատմամբ հավատարմությունը, համազգային համերաշխությունն ու հայրենիքի հանդեպ պարտքի բարձր գիտակցությունը երաշխիքն են մեր ազգի հարատևության և անկախ պետականության գոյության:

• Մենք Տիրոջ Հարության շնորհի ժառանգորդներն ենք և այդ անխախտ հավատով ի զորու ենք մեր տառապանքներն ու կորուստները վերափոխելու ազգային վերածննդի:

• Յուրաքանչյուր հավատացյալի աստվածահաճո կենցաղավարությամբ է նաև, որ հավելվում է մեր ժողովրդի ներուժը՝ Տիրոջն ապավինած դիմագրավելու առկա մարտահրավերներին և դառնալու զորեղ ազգ ու պետություն:

• Զինվորականների արիասիրտ ծառայության և սխրանքների ամուր հիմքը միշտ եղել և մնալու են հայրենիքի հանդեպ սերն ու նախանձախնդրությունը, ազգային արժեքների նկատմամբ հավատարմությունը:

• Աստվածամերժ ընթացքները մարդկությանը կանգնեցնում են չարիքների և կործանարար սպառնալիքների առջև:

• Աներեր մնանք մեր պատմությանն ու արժեհամակարգին հավատարմության մեջ, անխաթար պահպանենք մեր ինքնությունը, ինչը կարևոր է նոր սերնդի ոգու և գիտակցության կերտման, նաև աշխարհում մեր պետության և ժողովրդի հեղինակության ամրապնդման, ազգային իրավունքների պաշտպանության համար:

«Քրիստոնյա Հայաստան»

Գարեգին Երկրորդ Կաթողիկոսի եկեղեցաշեն գործունեությունը

↩ էջ 2

2. Մայացոտնի թեմ. Արտաշատի Ս. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցի, Մասիսի տարածաշրջանի Դաշտավան գյուղի Ս. Աստվածածին եկեղեցի, Դվինի Ս. Հարություն եկեղեցի, Մասիս քաղաքի Ս. Գևորգ եկեղեցի, Մասիս քաղաքի Ս. Թադեոս եկեղեցի, Մարմարաշենի Ս. Գևորգ եկեղեցի, Նորաբացի Ս. Աստվածածին եկեղեցի, Վեդիի Ս. Աստվածածին եկեղեցի:

3. Շիրակի թեմ. Գյումրիի Ս. Հակոբ Մծբնեցի եկեղեցի, Գտաշենի Ս. Կարապետ եկեղեցի, Եղնաջրի Ս. Սարգիս եկեղեցի, Ջույգաղբյուրի Ս. Խաչ եկեղեցի, Կաքավասարի Ս. Նարեկ եկեղեցի, Կրասարի Ս. Բարսեղ եկեղեցի, Ղարիբջանյանի Ս. Հոգի եկեղեցի, Շիրակավանի Ս. Աստվածածին եկեղեցի:

4. Արթիկի թեմ. Լեռնակերտի Ս. Վարդան (Սրբոց Վարդանանց) եկեղեցի:

5. Գուգարաց թեմ. Ալավերդու Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցի, Սպիտակի Ս. Հարություն եկեղեցի, Վանաձորի Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցի, Վանաձորի Ս. Սարգիս եկեղեցի, Տաշիրի Ս. Սարգիս եկեղեցի:

6. Արմավիրի թեմ. Մայր Աթոռի տարածքում Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցի, Աղավնատուն գյուղի Ս. Աննա եկեղեցի, Արմավիր քաղաքի Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցի, Դալարիկի Ս. Վարդան եկեղեցի, Մեծամոր քաղաքի Ս. Ղազար եկեղեցի:

7. Սյունյաց թեմ. Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի, Շինուհայրի Ս. Գրիգոր Տաթևացի եկեղեցի, Դավիթ Բեկ գյուղի Ս. Գայանե եկեղեցի, Շաքիի Ս. Աստվածածին եկեղեցի, Տոլորսի Ս. Հռիփսիմե եկեղեցի, Դարբասի Ս. Ստեփանոս եկեղեցի:

8. Արագածոտնի թեմ. Նոր Եդեսիայի Ս. Աստվածածին եկեղեցի, Չքնաղ գյուղի Ս. Ստեփանոս եկեղեցի և Ս. Նարեկ մատուռ, Բերքառատի Ս. Նշան եկեղեցի, Ղազարավանի Ս. Նարեկ (Սուրբ Գրիգոր Նարեկացի) եկեղեցի, Ագարակի Ս. Աստվածածին մատուռ, Արտաշավանի «Սուրբ Խաչ» հուշարձան և «Հույսի խորանի», Սրբոց Հրեշտակաց եկեղեցի, Գեղադիրի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Վերին Սասնաշենի Ս. Վարդան եկեղեցի, Շենավանի Ս. Ամենափրկիչ եկեղեցի:

9. Կոտայքի թեմ. Աբովյան քաղաքի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի, Առինջ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցի, Գառնիի Ս. Խաչ եկեղեցի, Եղվարդի Ս. Սարգիս եկեղեցի, Թեղենիքի Սրբոց Նահատակաց եկեղեցի, Նոր Հաճնի Ս. Ամենափրկիչ եկեղեցի:

10. Գեղարքունյաց թեմ. Գետիկ գյուղի Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցի, Թթուջուր գյուղի Ս. Աստվածածին եկեղեցի, Մեծ Մասրիկի Ս. Աստվածածին եկեղեցի, Սևան քաղաքի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցի, Վաղաշենի Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցի, Վարդենիկի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցի:

11. Վայոց ձորի թեմ. Վայքի Ս. Տրդատ եկեղեցի, Ջերմուկի Ս. Գայանե եկեղեցի, Կեչուտի Ս. Գայանե մատուռ, Մալիշկա գյուղի Սուրբ Աննա եկեղեցի, Աղավնաձոր գյուղի Ս. Աստվածածին եկեղեցի, Ելփինի Ս. Սարգիս եկեղեցի:

12. Տավուշի թեմ. Բերդ քաղաքի Ս. Հովհաննես Առաքյալ եկեղեցի, Իջևան քաղաքի Ս. Ամենափրկիչ եկեղեցի, Իջևանի Սրբոց Նահատակաց բաց խորան, Կողբ գյուղի Ս. Հովհաննես եկեղեցի, Նոյեմբերյան քաղաքի Սուրբ Աննա եկեղեցի:

13. Արցախի թեմ. Ստեփանակերտի Աստվածամոր Սուրբ Հովանի Մայր տաճար, Ստեփանակերտի Ս. Հակոբ եկեղեցի, Աղավնո գյուղի Սրբոց Նահատակաց եկեղեցի, Ասկերան քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցի, Մարտունի քաղաքի Ս. Ներսես Մեծ եկեղեցի, Հարությունագոմեր գյուղի Ս. Սարգիս եկեղեցի, Եղցահող գյուղի Ս. Սարգիս եկեղեցի, Ջագլիկ (Նոր Ջագլիկ) գյուղի Ս. Անտոն եկեղեցի, Մեծ Շեն գյուղի Ս. Գևորգ եկեղեցի, Վաղուհաս գյուղի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցի, Ներքին Հոռաթաղ գյուղի Ս. Գևորգ եկեղեցի, Քարագլուխ գյուղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի:

Գարեգին Երկրորդ Կաթողիկոսը Սուրբ Սարգիս վանական համալիրի շինարարական աշխատանքներին ծանոթանալիս, 2024 թ., 20 ապրիլի

Գարեգին Երկրորդ Վեհափառի գահակալության տարիներին բազմաթիվ եկեղեցիներ են կառուցվել, հիմնանորոգվել կամ մասնակիորեն վերանորոգվել նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու արտասահմանյան թեմերում: Նրա հովվապետության օրոք է կառուցվել սփյուռքի ամենամեծ հայկական եկեղեցին՝ Մոսկվայի հայկական եկեղեցական համալիրը: Եկեղեցիներ են կառուցվել Ռուսաստանում, Վրաստանում, ԱՄՆ-ում, Բելառուսում և այլ երկրներում:

Գարեգին Երկրորդ Կաթողիկոսի եկեղեցաշեն գործունեության պսակը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վանական համալիրի ու շրջակա տարածքի կառուցապատումն ու բարեկարգումն է՝ ժամանակակից կյանքի պայմաններին համահունչ: Տարբեր ժամանակաշրջաններում Հայոց կաթողիկոսների կողմից ձեռնարկված և իրականացված Մայր Աթոռի բարեկարգման և հոյակերտ կառույցներով համալրման աշխատանքները նոր թափով շարունակվեցին նրա գահակալության տարիներին: Այսպես, 2001 թ. կառուցվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ս. Տրդատ բաց խորանը՝ ի նշանավորումն Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի և հովանավորությամբ ազգային բարերար Լուիզ Մանուկյան-Սիմոնի: Խորանի վրա կատարվում են եկեղեցական մեծ միջոցառումներ, ինչպես օրինակ՝ 2001, 2008, 2015 և 2024 թթ. Մյուռոնօրհնության արարողությունները: Խորանի արևմտյան կողմում լայնարձակ հրապարակ է՝ նախատեսված ավելի քան 1500 հոգու համար:

2005–2008 թթ. կառուցվել է Դիվանատունը, որի ճարտարապետներն են Ա. Ավագյանն ու Ա. Փափազյանը: Դիվանատունը կառուցվել և կահավորվել է ամերիկաբնակ հայտնի բարերարներ Նազար և Արտեմիս Նազարյանների նվիրատվությամբ: Այստեղ են գտնվում Դիվանատան և Կաթողիկոսարանի վարչական գրասենյակները:

Գարեգին Երկրորդ Կաթողիկոսի նախաձեռնությամբ Մայր Աթոռում 2008 թ. կառուցվեց Ս. Վարդան և Ս. Հովհաննես Մկրտիչ մկրտարանը, որի ճարտարապետներն են Ջ. Թորոսյանը և Ռ. Ջուլհակյանը, իսկ 2007–2011 թթ. կառուցվեց Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին: Գևորգյան հոգևոր ճեմարանի հարևանությամբ կառուցված այս եկեղեցու բարերարն է «Հորիզոն 95» շինարարական ընկերության տնօրեն Գագիկ Գալստյանը, իսկ ճարտարապետը՝ Ջիմ Թորոսյանը: 2011 թ. նոյեմբերի 5-ին՝ Ս. Հրեշտակապետաց տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, տեղի ունեցավ Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցու օծման արարողությունը: Ս. Հրեշտակապետաց եկեղեցում են կատարվում ճեմարանականների մասնակցությամբ ամենօրյա ժամերգությունները և Սուրբ Պատարագի արարողությունները:

Ս. Հրեշտակապետաց եկեղեցուց հարավ 2009–2012 թթ. վեր հառնեց «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանը: Այն Մայր Աթոռի տարածքում գործող և ժամանակակից պահանջներին համապատասխան մատենադարանագրադարան է: Մատենադարանը մտահղացմամբ և արտաքին տեսքով հորինվածքային անմիջական կապի մեջ է շրջակա կառույցների հետ: Կառուցման մեկենասն է լոնդոնաբնակ հայտնի բարերար Վաչե Մանուկյանը, ճարտարապետը՝ Արտակ Ղուլյանը: Կառուցումն ավարտվել է 2012 թ., իսկ շենքի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել նույն տարվա հոկտեմբերի 18-ին: Կառույցը, բացի գրադարանային հարմարություններից, ունի նաև գիտաժողովների գեղեցիկ սրահ և հանդիսությունների դահլիճ: Հանդիսությունների դահլիճը, ըստ էության, բաղկացած է երկու հարակից կառույցից՝ դահլիճից և երկհարկ օժանդակ կամարակապ սրահից: Մատենադարանում պահվում է հայագիտական և աստվածաբանական շուրջ 90 000 միավոր գրականություն: Այստեղ նաև հավաքված են Աստվածաշնչի բոլոր հայերեն հրատարակությունները (1666 թվականից առայսօր): Մատենադարանում են պահվում նաև հայ մշակույթի մի շարք երախտավորների անձնական գրքային հավաքածուները: Մատենադարանն ունի շուրջ 700 միավոր հնատիպ գիրք, որոնց մեծամասնությունը ձեռք է բերվել 2002–2025 թթ.:

2019 թ. սեպտեմբերի 18-ին տեղի ունեցավ հիմնանորոգված Վեհարանի, Սրբոց Հայրապետաց մատուռի և նորակառույց հանդիսությունների սրահի բացումը: Վեհարանի հիմնանորոգման և բարեզարդման աշխատանքներն սկսվել էին տակավին 2010 թ.: Այսօր Վեհարանը, բարերարությամբ գործարար և բարեգործ Սամվել Կարապետյանի և իր ընտանիքի, ներկայանում է Ամենայն Հայոց կաթողիկոսներին վայել վսեմությամբ:

2001 թ. ամբողջովին վերանորոգվեցին սարկավագաց կացարանները, որտեղ ապրում են Մայր Աթոռի միաբան սարկավագները: Նույն թվականի ապրիլի 25-ին պաշտոնապես բացվեցին նոր ննջարանները: Վերանորոգումը կատարվել է ամերիկաբնակ բարերարներ Նազար և Արտեմիս Նազարյանների նվիրատվությամբ: Ավելի ուշ՝ 2013 թ., հիմնանորոգվեց «Երեմյան խցեր» միաբանական շենքը: Վերանորոգումն իրականացվել է Էդուարդ և Ժանետ Մարտիկյանների նվիրատվությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի կողմից կառուցվեց Մայր Աթոռի միաբանական նոր կացարանը՝ Հայ Եկեղեցու մեծ բարերար Ռիչարդ Մանուկյանի մեկենասությամբ, որի հիմնարկեքը կատարվել է 2002 թ. օգոստոսի 31-ին: Այն ձգվում է Ղազարապատի հարավային երկայնքով: Բաղկացած է 82 կացարանից, մյուս մասում վարչական և խոհանոցային սենյակներն են: Ճաշասրահները բաժանված են երեք մասի: Առաջին սրահը, որն ամենամեծն է, ճեմարանականների ամենօրյա և հանդիսավոր ճաշկերույթների համար է, մյուս՝ քիչ ավելի փոքր սրահը՝ սարկավագաց, իսկ փոքր սրահը ձեռնադրյալ հոգևորականների ճաշասրահն է:

2007–2009 թթ. կառուցվեց Վեհարանի հարավային՝ պաշտոնական այցելությունների դարպասը: Դարպասի ճարտարապետական հորինվածքի մշակումն ու շինաքարի ընտրությունը պայմանավորված էին ինչպես Վազգենյան մուտքի ճարտարապետությամբ, այնպես և հարակից «Խրիմյան» թանգարանի պատմական պատկերին ներդաշն միջավայրի ստեղծմամբ: Մուտքի կառուցման ծախսերը հոգացել են Պետրոս և Ռիթա Ասլանյանները: 2012 թ. «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանի հարավային կողմում կառուցվեց Թարգմանչաց մուտքը: Այն Մայրավանք մտնող մեքենաների ու այցելուների հիմնական մուտքն է: Կառուցված է նույն քարով, ինչ Մատենադարանը, և գտնվում է վերջինիս հետ համադրության մեջ:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ջանքերով 2015 թ. կառուցվեց նաև ստալինյան բռնատիրության զոհ հոգևորականների հուշապատը: Այն ինքնին երեք մակարդակի վրա լուծված՝ 2.2 մ շառավղով կամարների ճարտարապետական համակառույց է: Ամեն մի կամար իր կենտրոնով անցնող հորիզոնական տրամագծի առանցքում ունի պատվանդան, որի վրա դասավորված են տարբեր չափի խաչքարեր: Առաջին հարկի կամարների կենտրոնական քառակուսիների վրա բռնադատված հոգևորականների անուններն են փորագրված: Պետք է նկատել, որ ստալինյան բռնապետության զոհերին նվիրված նման բազմաբովանդակ ստեղծագործություն մինչ այդ չէր իրականացվել:

1999–2019 թթ. մի քանի անգամ վերանորոգվեց «Ալեք և Մարի Մանուկյան» գանձատունը, ուր բացվեց նաև ձեռագրերի ցուցադրության սենյակ: Առանձին սրահում ցուցադրվում են այն իրերը, որոնք Հայ Առաքելական Եկեղեցուն են նվիրել հյուրերը, այցելուներն ու հավատացյալները:

2007–2008 թթ. Գարեգին Երկրորդ Կաթողիկոսի օրհնությամբ հիմնովին վերանորոգվեց ու կահավորվեց «Խրիմյան» թանգարանը, իսկ 2012–2013 թթ. Մայր Աթոռի նախկին սեղանատան տեղում հիմնվեց Ռուբեն Սևակի անվան թանգարանը, ուր ցուցադրված են շուրջ 200 բացառիկ, արժեքավոր կտավներ, ինչպես նաև 1915-ի Հայոց ցեղասպանության նահատակ բանաստեղծ և բժիշկ Ռուբեն Սևակի ածխանկարները, անձնական իրերն ու փաստաթղթեր, պատմական ցուցանմուշներ:

2017 թ. Գարեգին Երկրորդ Հայրապետի նախաձեռնությամբ և տնօրինությամբ սկսվեցին Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի ամրակայման և հիմնանորոգության աշխատանքները (հիմնանորոգման աշխատանքներն ընթացել են շուրջ 12 տարի՝ սկսած 2012 թվականից), որոնք ավարտվեցին 2024 թ.: Նույն թվականի սեպտեմբերի 29-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օրհնված Սրբալույս Մյուռոնով, որը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդի օրհնած 4-րդ Մյուռոնն է, օծվեց Մայր Տաճարի Ավագ Խորանի Սուրբ Սեղանը, և մատուցվեց Հայրապետական Սուրբ Պատարագ:

2025 թ. հուլիսի 27-ին՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Մայր Տաճարի շրջաբակում կառուցված Կաթողիկոսական դամբարանի և մոմավառության աղոթասրահի բացման արարողությունը: Կաթողիկոսական դամբարանը և մոմավառության աղոթասրահը կառուցվել են ազգային բարերար, հոգելույս Գառնիկ Յակուբյանի և տիկին Անահիտ Չաթալպաշյան-Յակուբյանի հովանավորությամբ: Ճարտարապետներն են Ասլան Մխիթարյանը և Հայկ Մկրտչյանը:

Այսպիսով՝ Գարեգին Երկրորդ Վեհափառ Հայրապետն իր եկեղեցաշեն գործունեությամբ միանգամայն արժանիորեն ու պատվով գլխավորում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու շինարար գահակալների փառահեղ փաղանգը: Գարեգին Երկրորդ Վեհափառի եկեղեցաշեն գործունեությունը վերստին ու առհավետ փաստում է, որ Հայ Առաքելական Եկեղեցին մշտապես եղել ու մնում է հայ ազգին համախմբող, ազգապահպան հոգևոր-մշակութային և ինքնութենական մշտավառ ու անսասան կենտրոն:

Արման ՄԱԼՈՅԱՆ, պ. գ. թ.

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 15.08.2025 թ.
Տպաքանակը՝ 1265